Ազգ
Azg
30 ՅՈՒՆՈՒԱՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 7(5090)
ISSN: 1829-1651

# Սամաթիայի հարձակումները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի յուրահատուկ պատրաստություն են

*Այդ մասին քրդամետ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորների հետ վկայում է նաեւ Ժողովրդա-հանրապետական կուսակցության փոխնախագահը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

«**Ազգը**» դեռեւս հիմնադրման օրից ուշադրության կենտրոնում է պահել Թուրքիայի քաղաքական զարգացումները: Միանգամայն տրամաբանական է, որ այդ նույն մոտեցումը ցուցաբերվեր Ստամբուլի հայաբնակ Սամաթիա թաղամասում զառամյալ հայ կանանց դեմ ուղղված չարանենգ հարձակումներին: Պարզապես ձեռքի տակ եղած ինֆորմացիան կցկտուր է ու քերի: Թեեւ այդ հարձակումների արձագանքը հասել է Վաշինգտոն, ԱՄՆ պետքարտուղարություն, դրանց առնչությամբ մտահոգություն է հայտնել Միջազգային ներում կազմակերպությունը, իսկ BBC-ի, CNN-ի թուրքական ծառայությունները արձագանքել են, սակայն թուրքական կենտրոնական թերթերը՝ հատուկենտ բացառությամբ, նախընտրում են շրջանցել:

Թերեւս դա է պատճառը, որ հարձակումներին անդրադառնում ենք «Էվրենսել», «Թարաֆ», «Բիանեթ» կայքէջերի միջոցով: Դրանցից «Բիանեթի» կիրակնօրյա հրապարակումից պարզվում է, որ Սամաթիայում օրը ցերեկով հենց փողոցի մեջտեղում դաժան ծեծի ենթարկվելու հետեւանքով 2 շաբաթ վերակենդանացման բաժնում տանջվող Թ. Ա.-ն, որի աչքը ստացած հարվածից կուրացել է, 87-ամյա Թուրֆանդա Աշըքն է: Նա հարձակման է ենթարկվել ոչ թե դեկտեմբերի սկզբին, ինչպես նշվում էր, այլ՝ նոյեմբերի 28-ին:

Ստամբուլի նահանգապետը հարձակումներին անդրադարձել է հունվարի 26-ին միայն: Այսինքն՝ երկու ամիս ուշացումով, այն էլ՝ դրանք գողության նկատառումներին վերագրելով նկրտումով, որ կոծկի դրանց ռասիստական բնույթը:

«Ֆաքիհի» քաղաքապետարանը, որի վարչական տարածքում է Սամաթիան, հարձակումներին արձագանքեց հունվարի 27-ին: Ինչ վերաբերում է հասարակական-քաղաքական կազմակերպություններին, ապա դրանցից առաջինը Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղն է արձագանքել, դիմելով հունվարի 23-ին ոստիկանության «Ֆաքիհի» բաժանմունք, որ զգուշացնի: Հունվարի 25-ին նույն մասնաճյուղը միեւնույն բաժանմունքին հարձակումների առնչությամբ զեկուցագիր է ներկայացրել:

Հունվարի 25-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահության գրավոր հարցում էր ներկայացրել Ժողովրդա-հանրապետական կուսակցության փոխնախագահ Սեզգին Թանրըքուլուն, պահանջելով, որ հարցմանը գրավոր պատասխանեն ինչպես Մեջլիսի նախագահությունը, այնպես էլ վարչապետ Էրդողանը:

Հաջորդ օրը «Ազատություն եւ համերաշխություն» կուսակցությունը բազմաթիվ այլ կազմակերպությունների մասնակցությամբ «Ուս ուսի՝ ընդդեմ ֆաշիզմի» կարգախոսով բողոքի ցույց էր կազմակերպել Սամաթիայում, որի ամսաթիվը «**Ազգի**» նախորդ համարում սխալմամբ հունվարի 27 էինք նշել: Մինչդեռ, հունվարի 27-ի ցույցը «Մի դիպչի՛ր հայ հարեւանիս», «Ատելությունը ձեզ, մարդկությունը՝ մեզ», «Հայ ժողովուրդը միայնակ չէ», «Քուրդ եմ եւ այստեղ եմ» մակագրությամբ ցուցապաստառներով նախաձեռնել է «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսը», որին Մարդու իրավունքների միության «Ռասիզմի եւ խտրականության դեմ պայքարի հանձնաժողովի» գլխավորությամբ մասնակցել են այլ կազմակերպություններ, ինչպես նաեւ քրդամետ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորներ Էրթուղլու Քյուրքչուն, տկն Սեբահաթ Թունջելը եւ Սըրրը Սուրեյա Օնդերը, որոնք միաժամանակ այս կոնգրեսի գործադիր կոմիտեի անդամներն են:

Տես էջ 5

# Մրցակցային ընտրություններ խիստ կարեւոր երկրորդ տեղով

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ




**Հեռավոր գյուղերում ապրող մարդիկ դուրս են գալիս գյուղամեջ՝ Երեւանից եկած հյուրին տեսնելու, խոսելու հետը, քաղաքներում հայտնի դեմքեր են տեսնում, ոմանք՝ առաջին անգամ նման մոտիկությունից, մայրաքաղաքում եւ հանրապետական նշանակության ճանապարհներին գունազարդ, մեծ, միջին, փոքր մեծությունների պաստառներ են հայտնվում, որոնցից մի քանիսը, ինչպես Մարկեսն իր «100 տարվա մենություն» գրքում, հիշեցնում են՝ «Վերեւում Աստված կա», այս պաստառների կողքին էլ կարդում ենք մեկ այլը. «Հնարավոր է»... Հայաստանը պատրաստվում է նախագահական ընտրությունների, քարոզչական ակտիվ շրջան է:**

**Ժողովրդավարական երկրներում, ինչպիսին համարում ենք նաեւ մեր երկիրը, յուրաքանչյուր ընտրություն նախորդից առնվազն մեկ քայլ առաջ է, չկրկնվող, իր տեսակով՝ աննախադեպ: Ու, եթե ուշադրությամբ զննենք ընտրական այսօրվա գործընթացները, ապա կհամոզվենք, որ այս ընտրությունները նախորդ բոլորից տարբերվում են: Ընդ որում՝ խոսքն ամենեւին էլ այս ընտրությունների «ոչ մրցակցային» լինելու մասին չէ, ավելին, ամենեւին էլ չի կարելի պնդել (անգամ անթույլատրելի է այդ պնդումը), թե այս ընտրությունները ոչ մրցակցային են: Օրինակ՝ մինչ Հայաստանում գրեթե բոլորը խոսում են գալիք ընտրությունների կանխորոշված ու ոչ մրցակցային լինելու մասին, համաեվրոպական Euronews հեռուստաընկերությունը ՀՀ նախագահի ընտրութուններին վերաբերող իր փոքրիկ տեսանյութում օրեր առաջ ընդգծեց. «Փետրվարի 18-ին կայանալիք Հայաստանի նախագահի ընտրություններում գործող նախագահ Սերժ Սարգսյանն ունի ուժեղ մրցակիցներ՝ ի դեմս նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի եւ նախկին ԱԳ նախարար Րաֆֆի Հովհաննիսյանի...»: Հետեւաբար, գոնե Euronews-ի կարծիքով, մեր երկրում նախկին վարչապետներն ու ԱԳ նախարարները կարող են «ուժեղ մրցակիցներ» համարվել գործող նախագահների համար: Ու եթե անգամ մենք ինքներս հասկանում, տեսնում ենք, որ դա ամենեւին էլ այդպես չէ, սա չի նշանակում, որ ընտրությունները մրցակցային չեն: Մասնավորաբար մրցակցություն կա Րաֆֆի Հովհաննիսյանի ու Հրանտ Բագրատյանի միջեւ՝ առնվազն երկրորդ տեղը գրավելու համար: Քանի որ այս կազմով ընտրություններում երկրորդ տեղն ամենեւին էլ սովորական երկրորդ տեղ չէ:**

Տես էջ 3

# Թուրքական անօդաչու ինքնաթիռ

**Թուրքիան ավարտել է նոր՝ Anka անօդաչու ինքնաթիռի փորձարկումները, որով Turkish Aerospace Industries ընկերությունը զբաղվում էր 2009-ից: TAI-ի մամլո տեղեկագրում նշվում է, որ վերջին փորձարկումներն անցկացվել են 2013 թ. հունվարի 20-22-ը: Ներկայումս ընկերությունը Ռազմարդյունաբերության քարտուղարության հետ բանակցում է զանգվածային արտադրություն սկսելու նպատակով:**

**Կատարվել են մի շարք փորձնական թռիչքներ: 2013-ի հունվարին թռչող սարքը քամու պայմաններում օդում մնացել է 18 ժամ: Anka-ի կապի հեռավորությունը կազմում է 200 կմ: Փորձարկվել է ավտոմատ վերելքի եւ վայրէջքի հնարավորությունը: Հունվարի 22-ին անօդաչու ինքնաթիռը կատարել է գիշերային թռիչք:**

**Anka-ի երկարությունը 8 մետր է, թեւերի բացվածքը՝ 17,3 մետր: Շարժիչի հզորությունը 155 ձիաուժ է: Օդում կարող է մնալ առնվազն 24 ժամ՝ հետախուզություն իրականացնելով 9 հազար մետր բարձրությունից: Հանդերձավորված է դիտարկման ինֆրակարմիր եւ էլեկտրոնային-օպտիկական համակարգերով, բայց ապագայում նախատեսվում են ռադիոէլեկտրոնային հետախուզության համակարգեր, արբանյակային կապ եւ ազդանշանների վերահեռարձակիչ:**

# Սաակաշվիլին նոր գլխացավ ունի, անունը՝ Չախալյան

**Վրացական իշխանությունները իրենց գործն ու դարդը թողած՝ ընկել են ջավախահայ ակտիվիստ Վահագն Չախալյանի՝ համաներմամբ վրացական բանտից ազատ արձակվելու հետեւից: Հերթական անգամ Վրաստանի նախագահն է անդրադարձել Չախալյանի ազատ արձակվելու հանգամանքին, նշելով, թե հայ ակտիվիստի՝ բանտում եւս 5 տարի մնալու եւ նոր միայն ազատ արձակվելու դեպքում «Վրաստանի համար նա որեւէ խնդիր չէր ներկայացնի»:**

**Ստացվում է, որ կամա-ակամա Սաակաշվիլին նախ ընդունում է, որ Չախալյանը «լուրջ» խնդիր է ընկալվում վրացիների համար: Սակայն ավելի հասկանալի է, որ, ըստ Սաակաշվիլու, հինգ տարի անց Չախալյանը «խնդիր» չէր լինի: Եթե հաշվի առնենք, որ Չախալյանի նկատմամբ բանտային տարիներին ճնշումներ են գործադրել, մի քանի անգամ բռնություններ են իրականացվել, թերեւս Սաակաշվիլին կարծում է, որ այդ ճնշումները եւս 5 տարի շարունակելու դեպքում Չախալյանն ազատ արձակվելով ոչինչ անել չէր կարողանա:**

**Սաակաշվիլու խոսքի մնացյալ հատվածն, ինչպես ասում են, առավել խոսուն է. «Կարող են հարցնել՝ բանտ նստեցնելով մեկ մարդու հարց կլուծվի՞: Իհարկե, մեկին նստեցնելով բոլոր հարցերը չեն լուծվի: Բայց մենք այս տարիների ընթացքում Սամցխե-Ջավախեթիում շատ խնդիրներ ենք լուծել»: Ասվածը փաստում է, որ «խնդիր» ընկալվող Չախալյանն ու այլ ակտիվիստները բանտարկվել ու հետախուզման տակ են հայտնվել որպես «խնդիրների լուծում»:**

**Իսկ որ Սաակաշվիլին խոստովանել է նաեւ, թե ինքն անձամբ է վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն ասել «բաց չթողնել Չախալյանին», վկայում է, որ ժամանակին Չախալյանի գոյության ու բանտարկության անհեթեթության մասին անտեղյակ ներկայացնող բոլոր վրացի չինովնիկներն էլ հրաշալի տիրապետել են իրավիճակին, ավելին, աշխատել են ամեն գնով բանտում պահել «գործակալին» որպես «խուլիգանի», երբ, օրինակ, Սաակաշվիլու անձնական լուսանկարչին ամենայն հանգստությամբ մեղադրում էին լրտեսության մեջ՝ չընկնելով խուլիգանական հոդվածներ «հնարելու» հետեւից:**

**Վ. Պ.**

# Սերժ Սարգսյանը եւ Հրանտ Բագրատյանը առաջատարներ հակառակ կողմերից

The Gallup Organization կազմակերպությունը, Հայաստանի սոցիոլոգիական ասոցիացիան, «Արմնյուզ» հեռուստաընկերությունը անցկացրել են սոցիոլոգիական հարցում՝ բացահայտելու եւ վերլուծելու Հայաստանի բնակչության քաղաքական-հասարակական տրամադրություններն ու կարծիքները: Սոցհարցումն անցկացվել է հունվարի 15-23-ը 1020 չափահաս բնակչի շրջանում: Հարցման մասնակիցների 66 տոկոսը նշել է, որ իր ձայնը կտա գործող նախագահ Սերժ Սարգսյանին: Երկրորդ հորիզոնականում Րաֆֆի Հովհաննիսյանն է՝ 10 տոկոս ձայն, Պարույր Հայրիկյանն ու Հրանտ Բագրատյանը հավաքել են 4-ական, իսկ Արամ Հարությունյանը՝ 1 տոկոս ձայն:




Նախագահի մնացած երեք թեկնածուները չեն հաղթահարել մեկ տոկոսի շեմը: Միաժամանակ, թեկնածուները դեռ ժամանակ ունեն պայքարելու 16 տոկոս ձայնի համար: Հենց այսքան է կազմել չկողմնորոշված անձանց տոկոսը:

«Ո՞ւմ ձայն չէիք տա» հարցին ամենից շատ ձայն հավաքել է ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը: 1020 բնակչի 20 տոկոսը չի ցանկանում նախագահի պաշտոնում տեսնել Բագրատյանին, 18 տոկոսը՝ Պարույր Հայրիկյանին, Րաֆֆի Հովհաննիսյանն ու Արամ Հարությունյանը հավաքել են 17-ական տոկոս, իսկ Սերժ Սարգսյանը՝ 13:

Մասնագետները փորձել են պարզել նաեւ կուսակցությունների վարկանիշը: Լավագույն հնգյակում են՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը, «Բարգավաճ Հայաստանը», Հայ հեղափոխական դաշնակցությունը, Հայ ազգային կոնգրեսն ու «Ժառանգությունը»:

Սա Gallup-ի երկրորդ սոցհարցումն է, առաջինը կատարվել էր դեկտեմբերին, երբ դեռ հայտնի չէր, թե ովքեր են առաջադրվում նախագահի թեկնածուներ: Երրորդ եւ վերջին սոցհարցման արդյունքները կհրապարակվեն փետրվարի 9-ին:

Հ. Հ.

# ՀԱՊԿ գլխավոր քարտուղար. Քաղաքացիական ինքնաթիռներ կործանելու Ադրբեջանի որոշումն «անհաջող կատակ է»



Երեկ եւ այսօր Հավաքական անվտանգության գլխավոր կազմակերպության պատվիրակությունը գլխավոր քարտուղար **Նիկոլայ Բորդյուժայի** գլխավորությամբ մասնակցել է ռուս-հայկական ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովին կից հայկական եւ ռուսական մասերի համատեղ նիստին: Նիստում համակարգվել է ՀԱՊԿ-ի, Միջպետական հանձնաժողովի եւ դրան կից Գործարար խորհրդի շրջանակներում անցկացվելիք միջոցառումների անցկացումը: Քննարկվել են զրահատանկային եւ ինժեներական, ՀՕՊ համակարգերի, «Մի» մակնիշի ուղղաթիռների, ռուսական արտադրության մեքենաների տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման նպատակով Հայաստանի տարածքում արտոնագրված սպասարկման կենտրոններ ստեղծելու վերաբերյալ հարցեր: ՀԱՊԿ քարտուղարությունն ու ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը հուշագիր են ստորագրել Հայաստանում «ՀԱՊԿ ակադեմիա» ստեղծելու մասին:

ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանի** հետ համատեղ ասուլիսի ժամանակ Բորդյուժան «անհաջող կատակ» որակեց Ադրբեջանի կառավարության այն որոշումը, որն իրավական հիմք է տալիս Արցախի տարածքում թռչող ինքնաթիռների ուղղությամբ կրակ բացել:

«Կարդացել եմ նման արձագանքների մասին ու մտածում եմ, որ դա կամ անհաջող կատակ է, կամ մտքի անհաջող ձեւակերպում: Ես դիտարկում եմ Ադրբեջանը որպես քաղաքակիրթ երկիր, որը հավատարիմ է մարդկային նորմերին: Խիստ կասկածում եմ, որ մեր օրերում որեւէ երկրի ղեկավարություն կարող է ուղղակի հրաման տալ կրակ բացելու քաղաքացիական ինքնաթիռների վրա: Պատմության մեջ եղել են նման դեպքեր, սակայն մենք հիշում ենք նաեւ դրանց վերաբերյալ միջազգային ուժերի արձագանքը: Ամեն դեպքում, չեմ պատկերացնում, որ իրեն քաղաքակիրթ համարող պետությունն իրեն թույլ կտա ոչնչացնել քաղաքացիական ինքնաթիռները: Այնպես որ, ես նման հայտարարություններին լուրջ չեմ վերաբերվում», ասել է Բորդյուժան:

Հիշեցնենք, որ Ադրբեջանի կառավարությունը հունվարի 18-ին համապատասխան որոշում է ընդունել, որը իրավական հիմք է տալիս Արցախի տարածքում թռչող ինքնաթիռների ուղղությամբ կրակ բացելու:

Հ. Հ.

# Եզդիների 99 տոկոսը չի տիրապետում իր մայրենի լեզվին



Ինչպես տեղեկացրեց «Սինջար» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպության նախագահ **Բորիս Թամոյանը**, Երեւանում ապրող եզդի երեխաների 99 տոկոսը չի կարողանում ո՛չ գրել, ո՛չ խոսել մայրենի լեզվով: Այս խնդրին լուծում տալու նպատակով որոշել են Երեւանում ստեղծել կենտրոն, որտեղ եզդի երեխաները կկարողանան եզդիերեն սովորել` անվճար:

«Մենք ընտրեցինք հենց Երեւանը, քանի որ այստեղ այդ խնդիրն ամենատարածվածն է` դպրոցներում չի դասավանդվում, եւ եզդիները կտրվում են իրենց լեզվից»,- ասաց Բ. Թամոյանը:

Այս դասընթացների ժամանակ կխոսվի եզդիների կրոնի, մշակույթի մասին, որը, ինչպես ասաց Բորիս Թամոյանը, վատ վիճակում է, ավելին` աղանդավորական կազմակերպությունները ներթափանցում են եզդիական համայնքներ եւ կրոնափոխ են անում իրենց հայրենակիցներին. «Երբ մարդիկ տեղեկացված չեն իրենց կրոնից, ապա այլ դավանանքին հարելն ավելի հեշտ է լինում: Իրաքից ուղարկել են աղոթքներ, որոնք եւս դասընթացների ժամանակ կուսուցանվեն»:

Բ. Թամոյանն ասաց, որ եզդի երեխաների համար հավաքում են գրքեր, որոնք կուղարկվեն Ֆրիկ գյուղ: Գրքերը կարող են լինել ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով` տարբեր բնագավառների:

Ծրագրին միանալու համար կարող եք կապ հաստատել հետեւյալ էլեկտրոնային հասցեով` boroozman@gmail.com:

Ս. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՌԱԶՄԱՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ

# Հայ-ռուսական ռազմական համագործակցության խորացում

*Երեւանում էր ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն*



Հունվարի 28-ից 29 պաշտոնական այցով Երեւան ժամանած Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն երեկ առավոտյան պաշտպանության նախարարությունում էր: Նախարար **Սեյրան Օհանյանի** հետ հանդիպումից հետո երկու երկրների ԶՈՒ ղեկավար կազմի մասնակցությամբ տեղի ունեցավ փակ խորհրդակցություն: Երկրի ռազմամարտավարական հարցերի լայն շրջանակը քննարկելուց հետո երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները հանդիպեցին լրագրողներին:

Նախարար Օհանյանը Շոյգուի այցը գնահատեց ծրագրային: Նրա խոսքերով` առավել հաճելի է, որ ՌԴ պաշտպանության նախարարի այցը տեղի ունեցավ ՀՀ ԶՈւ ստեղծման 21-ամյակի տոնակատարությունների օրերին: «Դա շատ խորհրդանշական է եւ ամբողջությամբ համապատասխանում է հայ-ռուսական դաշնակցային խորացող հարաբերությունների ոգուն եւ միտումներին», ասաց նախարարը` հավելելով, որ ռուս գործընկերոջ հետ քննարկել են միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության հարցերի լայն շրջանակ: Օրակարգային են եղել ռազմական եւ ռազմատեխնիկական հարցերը: «Ներկա այցը, անշուշտ, նոր զարկ է հաղորդում հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների հետագա զարգացմանն ու նպաստում տարածաշրջանում բարեկամության եւ բարիդրացիական հարաբերությունների, կայունության եւ անվտանգության ամրապնդմանը», շեշտեց Օհանյանը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով ԶՈՒ կազմավորման տարեդարձի առթիվ, Սերգեյ Շոյգուն ասաց, որ մանրամասնորեն քննարկել են տարածաշրջանային եւ միջազգային անվտանգության հարցերն ու ընդունել են մի քանի լրացուցիչ որոշումներ: ՌԴ պաշտպանության նախարարը հավելեց, որ Հայաստանում գտնվող ՀԱՊԿ ղեկավարությունն էլ նույն ոգով փաստաթղթեր է ստորագրել տարածաշրջանում անվտանգության ապահովմանը նպաստող լրացուցիչ տարրերի վերաբերյալ: Շոյգուն նաեւ ասաց, որ փետրվարին կքննարկվի ռուս-հայկական համագործակցության առաջիկա 5 տարիներին առնչվող հարցեր:

Մինչ պաշտպանության նախարարություն այցելությունը, Սերգեյ Շոյգուն հանդիպել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին:

Սա Սեյրան Օհանյանի եւ Սերգեյ Շոյգուի երրորդ հանդիպումն է: Ինչպես նշեց ռուս նախարարը, նախորդ երկու հանդիպումները կայացել են անցյալ տարի: «Անցյալում ձեռք բերված պայմանավորվածություններն իրականացվել են»:

Հիշեցնենք, որ Սերգեյ Շոյգուն պաշտպանության նախարար է նշանակվել նախորդ տարի` նոյեմբերի 6-ին: Նա արժանացել է ՌԴ հերոսի կոչման: Զինվորական կոչմամբ նա բանակի գեներալ է:

Հ. Հ.

## Ցավակցություն

Խորապես ցավակցում ենք Գյումրու մեր թղթակից Գեղամ Մկրտչյանին եղբոր`

**Մանվել Մկրտչյանի**

անժամանակ մահվան կապակցությամբ:

# Նոր հրատարակություն Կիլիկիայի հայերի մասին

Բեյրութի ֆրանսիական համալսարանի (Universite Saint-Joseph) հրատարակչատունը լույս է ընծայել «Կիլիկիայի հայերը` բնաշխարհ, հիշողություն եւ ինքնություն» (Les ArmØniens de Cilicie: Habitat, MØmoire et IndentitØ) խորագրով գիրք-ալբոմը, տեղեկացնում է Կանադայում լույս տեսնող «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի դեկտեմբերի 17-ի համարը: Ֆրանսերեն լեզվով մոտ տասը գիտական հոդվածներ եւ 100-ից ավելի հին լուսանկարներ ընդգրկող գրքի հեղինակներն են Միհրան Մինասյանը, Լեւոն Նորսիկյանը, Վահե Թաշճյանը, Ռեյմոն Հարություն Գեւորգյանը եւ Միշել Փապուճյանը:

Միհրան Մինասյանը ներկայացրել է Կիլիկիայի հայ լուսանկարիչների ցանկը, տալով յուրաքանչյուրի մասին կենսագրական տեղեկություններ: Լեւոն Նորսիկյանը հնագիտական պրպտումների եւ վկայագրությունների հիման վրա վերականգնել է Սիսի կաթողիկոսարանի Ս. Սոֆիա տաճարի հատակագիծը: Վահե Թաշճյանն իր առաջին հոդվածում վերլուծության է ենթարկել Կիլիկիայի հայաբնակ վայրերի մասին լույս տեսած հուշամատյանները, որոնցում անդրադարձ կա տվյալ վայրի պատմության, սովորությունների եւ կենցաղի մասին: Երկրորդ հոդվածում նա ներկայացրել է Կիլիկիայի հայ մարդու յուրահատուկ տիպարը, որն իր թրքախոսության եւ կենցաղի առանձնահատկությունների պատճառով հաճախ պախարակվել է Պոլսո հայության եւ հետագայում նաեւ Սիրիայի եւ Լիբանանի հայ ազգային մարմինների կողմից:

Ռեյմոն Հարություն Գեւորգյանի առաջին գրությունը Կիլիկիայի հայության բնակության տարածքային բաժանումների, իսկ երկրորդը` երկրում գործող հայկական դպրոցների մասին է: Եվ վերջապես Միշել Փապուճյանը ամփոփ գծերով ներկայացրել է Զեյթունի հայոց պատմությունն ու անդրադարձել կենցաղային զանազան հատկանիշների:

Մեծ թվով լուսանկարների գոյությունը ապացուցում է, որ հայը եղել է անբաժանելի եւ հարազատ տարրը այդ բնաշխարհի:

Գիրքն ընդհանրապես փորձ է վերականգնելու Կիլիկիայում հայկական դարավոր եւ կորսված կյանքի զանազան ոլորտները:

Վերջին տարիների ընթացքում Բեյրութի ֆրանսիական համալսարանի հայկական թեմայով լույս ընծայած նախորդ երկու հրապարակությունները եղել են «Les Armeniens: La quete d□un refuge, 1917-1929» եւ Վարդան Տեր-Ստեփանյանի... 

Հ. Ծ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Փառամոլությունը մթագնում է մարդկանց ուղեղը




ՀՀ անկախության 22 տարիների ընթացքում ընդդիմությունը միայն մի անգամ (մասամբ) միավորվեց, եւ 1998 թվականին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց:

Մեր ընդդիմությունը «համառորեն» չի միավորվում, որովհետեւ ամեն մեկը ցանկանում է ինքը միայնակ հաղթել եւ միայնակ տեր դառնալ հանրապետության իշխանությանը եւ նախագահական աթոռին:

Ոչ վաղ անցյալում այդպես վարվեցին իրենց արմատական ընդդիմություն համարող մի շարք կուսակցությունների ղեկավար պարոնները՝ Արթուր Բաղդասարյանը, Արտաշես Գեղամյանը, Վազգեն Մանուկյանը, Արշակ Սադոյանը, Շավարշ Քոչարյանը եւ այլք: Չհասնելով իրենց երազանքին՝ նախագահական աթոռին, լքեցին ընդդիմադիր դաշտը, մտան իշխանության փեշի տակ եւ ձեռք բերեցին ինչ-ինչ տաքուկ պաշտոններ:

Վերջին՝ 2012 թվականի մայիսյան խորհրդարանական ընտրությունների ընթացքում ընդդիմադիր ուժերը դարձյալ չմիավորվեցին: Ընտրությունների քարոզարշավի ընթացքում բոլորը բազմիցս հայտարարեցին, որ հենց իրենց կուսակցությունն է խորհրդարանում մեծամասնություն կազմելու...

Սակայն ընտրություններից հետո պարզ դարձավ, որ իրենց այդ անիրատես հիվանդագին լավատեսությունը ոչ այլ ինչ էր, քան փառամոլության պատճառով ուղեղի մթագնություն: Ընդդիմադիր բոլոր ուժերը ջախջախիչ պարտություն կրեցին: Նրանցից երեքը՝ ՀԱԿ-ը, «Ժառանգությունը» եւ Դաշնակցությունը հազիվհազ հաղթահարեցին 5%-ի շեմը: Ընդդիմադիր ուժերի անիրատես լավատեսությունը չիրականացավ, ժողովուրդը կրկին պարտվեց...

Սակայն ժողովրդի համար մի նոր հույսի լույս ճառագեց, թե ընտրություններից առաջ ԲՀԿ-ն կդառնա բացահայտ ընդդիմություն, կմիավորվի խորհրդարան մտած եւ արտախորհրդարանական բոլոր ընդդիմադիր ուժերի հետ, եւ առաջիկա նախագահական ընտրություններում հանդես կգան միասնական թեկնածուով, որը շատ թե քիչ հնարավորություն կտար մրցելու ՀՀԿ-ի «ահել» թեկնածու, գործող նախագահ, նախագահի թեկնածու պարոն Սերժ Սարգսյանի հետ:

Սակայն դա միայն թվում էր...

Երբ նախագահի թեկնածուների գրանցման ժամկետին հաշված օրեր էին մնացել, պարոն Սերժ Սարգսյանը իր մոտ հրավիրեց ԲՀԿ-ի նախագահ, նախագահի հավանական թեկնածու Գագիկ Ծառուկյանին եւ...

Հաջորդ օրը Գագիկ Ծառուկյանը ի լուր ողջ հայության հայտարարեց, որ ինքը չի գրանցվելու նախագահի թեկնածու, ԲՀԿ-ն չի մասնակցելու նախագահական ընտրություններին եւ չի սատարելու նախագահի որեւէ թեկնածուի: Հաջորդ օրերին նրա օրինակին հետեւեցին ՀԱԿ-ը եւ Դաշնակցությունը: Այս անգամ նրանք իրատեսորեն համոզված են, որ նախագահական ընտրություններում հաղթելու անգամ չնչին հնարավորություն չունեն:

Սակայն ինչպես ՀԱԿ-ն ու Դաշնակցությունը, այնպես էլ ԲՀԿ-ն ընդդիմադիր ուժերին չմիավորելու, ընտրություններին չմասնակցելու հարցում ոչ մի արդարացում չունեն: Նրանք ժողովրդին հուսախաբ արեցին ու թողեցին մոլորության մեջ: Ես այս երեւույթն այլ բան չէի որակի, քան՝ թշնամություն երկրի եւ սեփական ժողովրդի նկատմամբ:

Այնուամենայնիվ, բացի Սերժ Սարգսյանից, 2013 թ. փետրվարին կայանալիք նախագահական ընտրություններում նախագահի թեկնածու գրանցվեցին ժողովրդին հայտնի եւ անհայտ եւս յոթ թեկնածուներ՝ Րաֆֆի Հովհաննիսյանը, Պարույր Հայրիկյանը, Հրանտ Բագրատյանը, Վարդան Սեդրակյանը, Անդրիաս Ղուկասյանը, Արման Մելիքյանը եւ Արամ Հարությունյանը:

Արդեն սկսվել է ընտրապայքարի քարոզարշավը: Նրանցից ամեն մեկն ավելի քան համոզված է, որ հենց ինքն է առավելագույն ձայներ ստանալու եւ դառնալու ՀՀ չորրորդ նախագահը: Նրանցից շատերը ո՛չ իրենց են ճանաչում, ո՛չ իրենց մրցակիցներին եւ ո՛չ էլ ընտրազանգվածին ու հայ ժողովրդին: Թվում է, թե փառամոլությունը ոչ միայն նրանց ուղեղներն է մթագնել, այլ նաեւ տեսողությունն է խամրել: Քանզի ինչ հաղթանակի մասին է խոսքը, երբ նրանցից ոմանք անգամ 1-2% ձայն չեն հայթայթելու եւ նախագահական աթոռի փոխարեն խեղկատակի անուն են վաստակելու:

Ուրիշ է, թե յոթ թեկնածուները քարոզարշավի ընթացքում գան ընդհանուր հայտարարի եւ իրենցից մեկի օգտին դուրս գան ընտրապայքարից: Այդ մեկը՝ ով էլ լինի, ինքնաբերաբար, կդառնա ընդդիմության միասնական թեկնածու: Ցավոք, դժվար թե նրանք կարողանան ձերբազատվել իրենց անիրատես փառամոլությունից:

Ինչ վերաբերում է իշխանությանը՝ ընտրությունների հարցում ոչ մի խնդիր չունի: Հանրահայտ է, որ գործող նախագահ, ՀՀԿ նախագահի թեկնածու պարոն Սերժ Սարգսյանը մինչեւ ընտրությունների օրը՝ 2013 թվականի փետրվարի 18-ը, արդեն իսկ ընտրված նախագահ է: Ավելին՝ ՀՀԿ-ն համոզված է, որ 2018 թվականին կայանալիք նախագահական ընտրություններում արդեն իսկ հաղթանակն ապահովված է...

Նման ինքնավստահությունն անհիմն չէ: Ողջ Հայաստանը բոլոր առումներով գտնվում է ՀՀԿ-ի հակակշռի տակ:

Հանրապետական կուսակցության ամբողջ կառույցի եւ նրա ողջ շրջապատի համար մեր օրերի Հայաստանը իսկապես վարդագույն է: Նրանք հասել են գերմանացի հանճարեղ բանաստեղծ Վ. Գյոթեի երազանքի ասույթին՝ Կա՛նգ առ, ակնթարթ, ինչքա՜ն գեղեցիկ ես...

Հանրահայտ է՝ միանգամայն այլ տրամադրություն ունի ժողովուրդը: Օրըստօրե ավելի են ծանրանում ժողովրդի սոցիալական վիճակը, հասարակության ծայրահեղ բեւեռացումը եւ ժողովրդի չդադարող արտագաղթը:

Ցավոք, մեր երկրի նման վիճակի մեղավորները հենց մենք ենք: Մենք ենք ընտրողը եւ ընտրվողը, ամբողջ երկիրը թալանի տվողը, հայրենի երկրից արտագաղթողը:

Հայաստանի Հանրապետության երեք նախագահ ընտրեցինք, բայց հենց նրանց պատճառով անկախության բարիքներից էլ զրկվում ենք...

Վ. ԱՄԼԻԿՅԱՆ
Վաստակավոր ուսուցիչ

# Մրցակցային ընտրություններ խիստ կարեւոր երկրորդ տեղով

*1-ին էջից*

«Հիմնական ընդդիմության» ու նաեւ այլընտրանքային ԲՀԿ-ի՝ ընտրություններին չմասնակցելու որոշումներից հետո, հայաստանյան ընդդիմադիր դաշտը կարիք ունի որոշակի համախմբման, բայց նախքան դա, ու ինչը թերեւս առավել կարեւոր է, հետագա գործողությունների մշակման, թե՛ միասնական գործողությունների, թե՛ առանձին-առանձին: Այն թեկնածուն, որ ընտրություններում կզբաղեցնի երկրորդ տեղը, մեծ հնարավորություններ կստանա դառնալու այս գործողությունների հենասյունը, եթե կուզեք, գոնե ժամանակավոր կոչվել «Հայաստանի գլխավոր ընդդիմադիրը»: Բացի սրանից, Րաֆֆին խնդիր ունի սեփական վարկանիշը ճշգրտելու: Գաղտնիք չէ, որ «Ժառանգության» առաջնորդը երկրում մշտապես ունեցել է ժողովրդականության որոշակի մակարդակ, սակայն վստահաբար իրեն՝ Րաֆֆուն խիստ հետաքրքրական է, թե այդ մակարդակը որքա՞ն է: Սա չի կարող պարզ լինել, ասենք, խորհրդարանական ընտրությունների արդյունքում, իսկ նախագահականը ամենահարմարն է անձնական վարկանիշը ճշգրտելու համար: Ինչ վերաբերում է Բագրատյանին, ապա նա, բացի ողջ ընդդիմադիր դաշտում հեղինակությունը ձեռք բերելու ցանկությունից, ուզում է նաեւ տապալվող (եթե ոչ արդեն իսկ տապալված) ՀԱԿ-ում դառնալ «այն երիտասարդը», ում իր վերջին հայտարարությամբ «ճանապարհ տվեց» 68-ամյա Տեր-Պետրոսյանը: Այսօր Բագրատյանը հայտարարում է, որ ինքն ունի ՀԱԿ-ի կեսից ավելիի աջակցությունը, սակայն, ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբյանը, լինելով լիազորված հենց ողջ ՀԱԿ-ի անունից, հայտարարեց, որ ՀԱԿ-ը չի մասնակցում գալիք ընտրություններին ու թեկնածուներից որեւէ մեկին չի սատարում (գոնե առայժմ): Ստացվում է, որ Բագրատյանը, լինելով ողջ ՀԱԿ-ի մի շատ կարեւոր մասնիկներից մեկը, առաջադրվելով ու ՀԱԿ-ի ներսում որոշակի սատարում ունենալով, չի կիսում ՀԱԿ-ի համակարգողի, այսինքն՝ ողջ ՀԱԿ-ի դիրքորոշումը, ինչը կնշանակի, որ ՀԱԿ-ն այլեւս գոյություն չունի, կամ համակարգող Զուրաբյանն ուղղակի այլեւս չունի լիազորություն ելույթներ ու հայտարարություններ անելու ողջ ՀԱԿ-ի անունից, ինչը եւս կնշանակի, որ ՀԱԿ-ն այլեւս չկա: Այս պայմաններում, բնականաբար, ՀԱԿ-ում պետք է գտնվեն շատերը, ովքեր կցանկական «փոխարինել» Տեր-Պետրոսյանին, ու այդ շատերից մեկն էլ հենց Հրանտ Բագրատյանն է, որն իր նաեւ այս նպատակին հասնելու մեջ էլ ավելի կամրանա, եթե ընտրություններում գրավի երկրորդ տեղը:

Ուրեմն՝ մրցակցություն գալիք ընտրություններում կա:

Սակայն, ի տարբերություն բոլոր ընտրությունների, այս ընտրություններում ընդդիմությունը մասնատված է, ինչպես երբեք: 1996-ից Հայաստանի նախագահական բոլոր ընտրություններում ընդդիմությունը կենտրոնացած է եղել մեկ թեկնածուի շուրջը. 1996-ին այդ թեկնածուն Վազգեն Մանուկյանն էր, հանուն որի իրենց թեկնածությունները հանեցին շատերը, այդ թվում՝ այսօր առաջադրված Պարույր Հայրիկյանը, 1998-ին Ռոբերտ Քոչարյանի հիմնական մրցակիցը Կարեն Դեմիրճյանն էր, 2003-ին երկրորդ նախագահը մրցակցում էր Կարեն Դեմիրճյանի որդու հետ, իսկ 2008-ին որպես ընդդիմության կենտրոնացված թեկնածու ընկալելի էր 63-ամյա Լեւոն Տեր-Պետրոսյանը... Այսօր հիմնական ընդդիմադիրներից ՀՅԴ-ն չունի թեկնածու ու դեռեւս չի «ուղղորդել» սեփական համակիրներին, տապալվող ՀԱԿ-ը եւս չունի իր թեկնածուն ու ոչ մեկին չի սատարում որպես ամբողջություն, իսկ «Ժառանգության» առաջնորդին, չնայած, ինչպես վերջինիս կուսակից Զարուհի Փոստանջյանն է ասում՝ «Արեւելյան ու Արեւմտյան Հայաստանների, Արցախի ու Ջավախքի միասնական թեկնածուն է», ընդդիմադիր դաշտում չկա մի ուժ, անգամ «Ժառանգության» ցուցակով ԱԺ-ում հայտնված «Ազատ դեմոկրատները», որը կսատարի: Ո՞ւմ է ձեռնտու այս իրողությունը, իհարկե՝ իշխանություններին, չէ՞ որ հասկանում արդյոք սա Սերժ Սարգսյանի մրցակիցները, անշուշտ հասկանում են, ու եթե այդպես է, ապա այս հանգամանքը եւս մեկ անգամ ապացուցում է մեր այն եզրակացությունը, որ այս ընտրություններում ամենեւին էլ սովորական չի լինելու երկրորդ տեղը:

Ինչ վերաբերում է թեկնածուների վարած քարոզարշավին, ապա այս առումով էլ գալիք ընտրությունները նմանը չունեն, թեկուզ միայն այն առումով, որ նախորդ ոչ մի ընտրություններում հայաստանցի ընտրողները փողոցում քայլելիս, շուկայում առեւտուր անելիս, վարսավիրանոցում՝ մազ կտրելիս, երբեք չէին տեսել նախագահի թեկնածուի... Պետք է նկատել, որ Հայաստանի պետականության համար խիստ օգտակար են ինչպես **Րաֆֆիի**, այնպես էլ Բագրատյանի վարած քարոզարշավները, նույնը կարելի է ասել Հայրիկյանի մասով, միայն այն բացառությամբ, որ Հայրիկյանի քարոզարշավային ձեռագրին արդեն իսկ ծանոթ ենք: Տեսեք, Րաֆֆին նոր շունչ, երանգ է բերում հայաստանյան քարոզարշավային պատմությանը: Նա հայտնվում է ամենուր, ամենաանսպասելի տեղերում, որպես կանոն՝ ոտքով, սովորական մարդկանց բարեւելով, մեզանից մեկը լինելը մեզ համոզելու, ցույց տալու նպատակով: Ինչպես Ահարոն Ադիբեկյանն է ասում՝ «Րաֆֆին լավ առողջություն ունի, վստահություն է ներշնչում...», մի խոսքով՝ «Հնարավոր է», բայց՝ ընդամենը:

**Հրանտ Բագրատյանի** քարոզարշավը երկու տեսանկյունից կարելի է դիտարկել: Նախ Բագրատյանը խոսում է հիմնականում տնտեսությունից ու դա անում է տերմիններով, բազմաթիվ թվերով, ինչը սովորական քաղաքացուն, ոչ մասնագետին, ամենեւին էլ հասկանալի չէ, ավելին՝ հետաքրքրական չէ: Բագրատյանը չի փայլում հռետորական ունակություններով, նա լավ առողջություն չունի, փոխարենը, չժխտենք նախկին վարչապետի մասնագիտական գիտելիքների առկայությունը: Թեկնածու Բագրատյանն իր այս մասնագիտական զրույցներն ունենում է հիմնականում գյուղական համայնքներում, ինչպես ինքն է ասում. «Ես երբեք չէի մտածի, որ գյուղացիներին մեր ծրագրային դրույթներն այդքան կհետաքրքրեն», գուցե եւ այդպես է ու ավելի լավ, որ այդպես է, քանի որ Բագրատյանին հետաքրքրությամբ լսելով գյուղացիները կարող են եւ որոշակի դասընթացներ անցնել: Հետեւաբար, Կիեւի համալսարանում դասախոսող ՀՀ նախագահի թեկնածու Բագրատյանը եթե անգամ շատերին անհասկանալի է, շատերին էլ ուսանելի է:

Գործող նախագահը որդեգրել է քարոզարշավային, այսպես կոչենք, ամերիկյան մոդել. նա իր հանդիպումներում ամենեւին էլ չի ծանրաբեռնում լսարանը սեփական ընդարձակ ծրագիրն ամբողջությամբ ներկայացնելով: Փոխարենը ամեն բնակավայրում **Սերժ Սարգսյանը** ներկայացնում է իր ծրագրային դրույթներից մեկը, բայց մանրամասնորեն, հետեւաբար, նրա բոլոր հանդիպումներում ունեցած ելույթներից ամբողջովին կստացվի ամբողջական ծրագիրը:

**Պարույր Հայրիկյանը**, չնայած մարզային հանդիպումներ ունենալու ակտիվությամբ չի փայլում, սակայն ակտիվ է ֆեյսբուքում. «Հայրիկեան նախագահ» էջում տեղադրվում են Հայրիկյանի այդ օրվա հանդիպումների մասին պատմող տեղեկություններ, լուսանկարներ եւ այլն: Կասկածից վեր է, որ Հայրիկյանի ծրագրային որոշ դրույթներ խիստ կարեւոր են, անգամ արդիական՝ Հայաստանի համար, սակայն դա չի նշանակում, որ այդ ծրագրերը կյանքի կոչելու համար ՀՀ նախագահը պետք է պարտադիր Հայրիկյանը լինի:

**Արման Մելիքյանն**, ինչպես գիտենք, «քաղաքական, տնտեսական ու սոցիալական հարցերով քարոզչություն չի անում», **Արամ Հարությունյանը** պատրաստվում է ինքնաբացարկ ներկայացնել, հետեւաբար դիտարկելի չէ որպես նախագահի թեկնածու, **Անդրիաս Ղուկասյանը** ԳԱԱ-ի դիմաց արդեն 10-րդ օրը հացադուլի է մատնված, ու ոչ թե ինքն է այցելում, այլ իրեն են այցելում, իսկ **Վարդան Սեդրակյանը**, տպավորություն է առաջանում, որ եկել է մեզ պարզապես հիշեցնելու՝ «Վերեւում Աստված կա», «Հնարավոր է», իհարկե...

# Նախագահի թեկնածու Վարդան Սեդրակյան. հարկերը կվերացնեմ, արդարություն կհաստատեմ, երեք նախագահներն էլ կլինեն իմ խորհրդականները

**- Պարոն Սեդրակյան, Ձեր մասին հասարակությունն իմացավ միայն նախորդ տարվա կեսերին, երբ հայտարարեցիք, որ առաջադրվում եք նախագահի թեկնածու: Ի՞նչն էր պատճառը, որ էպոսագետը մտավ քաղաքականություն:**

- Խորհրդարանական ընտրություններից հետո, երբ իշխանությունը թվեր նկարեց իրենց եւ ընդդիմության համար, մտածում էի, որ ընդդիմությունը չի վերցնի մանդատներն ու կասի, որ ընտրությունները ծախված են, բայց այդպես չեղավ, ու հետագան ցույց տվեց, որ դա իրենց պետք էր նախագահական ընտրություններին երեւալու համար, զորօրինակ՝ թեկնածուն Հրանտ Բագրատյանն է: Երկրում արդարության պատասխանատուն իշխանությունն է, բայց դա մեր երկրում վաղուց մոռացված թեմա է: Արդարության հենասյունը պետք է լիներ ընդդիմությունը, բայց տեսանք, որ նա էլ ցանկություն չունի: Վերջին 10 տարվա ընթացքում որոշ իշխանական թեկնածուներ կարողացան «մտավորականություն» հասկացությունն արմատախիլ անել, ու հիմա մտավորականություն որպես այդպիսին գոյություն չունի: Հիմա ինձ ասում են, որ Գիտությունների ազգային ակադեմիայում էպոսագետ գոյություն չունի, ես էլ ասում եմ՝ իսկ ի՞նչ գոյություն ունի՝ սերժագե՞տ, առաջ էլ ռոբերտագե՞տ էին: Ես ուսումնասիրել եմ աշխարհի բոլոր էպոսներն ու 1998-ից ուսումնասիրել եմ «Սասնա ծռերը»: Իմ մուտքը քաղաքականություն ունի մեկ նպատակ՝ հաստատել արդարություն:

**- Ձեր նախընտրական ծրագիրը հիմնված է «Սասնա ծռեր» էպոսի հիման վրա: Դա ի՞նչ է ենթադրում:**

- Դա ենթադրում է, որ էպոսում կիրառված օրենքներն ու մոտեցումները պետք է դնել գործունեության մեջ մեր պետականության հիմքում: Մեր էպոսի հերոսներն արդարության հաստատողներն ու պահպանողներ են: Էպոսի միջոցով հույս ունեմ արդարություն հաստատել:

**- Տնտեսությունն է՞լ է կազմվելու էպոսի հիման վրա:**

- Իհարկե: Նախագահ դառնալուց հետո հարկերը կվերացնեմ: Նախ կլինի հողի հարկի վերացումը, հետո ոռոգման ջուրը կդառնա անվճար: Հսկիչ-դրամարկղային մեքենաները կվերանան: Մարդիկ կազատվեն շահութահարկից: Կվերանա ավելացված արժեքի հարկ կոչվածը: Գործարարները պետությանը կվճարեն եկամտահարկ 10 տոկոսի չափով: Հինգ տարի հետո եկամտահարկն էլ կվերանա: Մինչ այդ պետությանը կդարձնեմ ձեռնարկատեր, կստեղծվեն պետական փակ բաժնետիրական ընկերություններ, որոնք ոտքի կհանեն արդյունաբերության որոշակի ճյուղեր՝ քիմիական արդյունաբերությունը, էներգետիկ համակարգը, ռազմարդյունաբերությունը: Պետության բյուջեն կհամալրվի իր եկամուտներով, ոչ թե քաղաքացիներից հարկեր հավաքելով:

**- Արտաքին քաղաքականության առումով ի՞նչ եք առաջարկում:**

- Եթե նախագահն արդար մարդ չէ, միջազգային հանրությունը դա տեսնում է: Երբ նախագահը նախագահ է դառնում մարդկանց վրա կրակելով, նա դառնում է խոցելի եւ արտաքին քաղաքականության մեջ որեւէ նախաձեռնությամբ չի կարող հանդես գալ: Արցախն ու ազատագրված տարածքները կմիանան Հայաստանին, Նախիջեւանի վերամիավորումն, ասեմ, այդքան էլ դժվար բան չէ: Սա զուտ հայ-ադրբեջանական խնդիր չէ: Ռուսաստանն ու Թուրքիան խնամակալներ են, եւ ճիշտ դիվանագիտության դեպքում Ադրբեջանը կփակի աչքը Նախիջեւանը Հայաստանին վերադարձնելու հարցում: Թուրքիան չեզոքություն կցուցաբերի՝ ակնկալիքով, որ Հայաստանը գոնե առժամանակ մոռանա Արեւմտյան Հայաստանի եւ Ցեղասպանության մասին եւ պայմաններ չի դնի: Սակայն եթե չհամաձայնի՝ հրապարակ կբերեմ Սեւրի պայմանագիրն ու Թուրքիային կհիշեցնեմ, թե որտեղ են ձմեռում խեցգետինները:

**- Ձեր հարցազրույցներից մեկում կարդացի, որ եթե ընտրվեք նախագահ, կճանաչեք Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը: Դա չի՞ վնասի Հայաստան-Վրաստան հարաբերություններին:**

- Մենք Վրաստանի հետ ընդամենը ճանապարհ ունենք դեպի Սեւ ծով, իսկ դեպի Եվրոպա բազմաթիվ այլ ճանապարհներ ունենք: Աբխազիայի եւ Օսիայի ճանաչումը Հայաստանի համար կենսական նշանակության հարց է: Եթե մենք ընդունում ենք, որ հայերի պայքարն արդար է եւ Արցախը մեր պատմական հայրենիքն է, ապա արդար է նաեւ աբխազների եւ օսերի պահանջը: Այստեղ արդարության խնդիր կա: Ես վստահ եմ, որ դեպի Սեւ ծով տանող ճանապարհը չի փակվի, որովհետեւ եթե փակվի, նշանակում է՝ մեր ճանաչումից հետո Վրաստանը ռազմական գործողություն է սկսելու: Խնդրեմ: Վրաստանը պետք է իմանա, որ առնվազն 200.000 հայ Թբիլիսում է ապրում, նույնքան էլ՝ Ջավախքում: Պատերազմը կարող է անդառնալի լինել, Վրաստանը կկորցնի Ջավախքն ու Աջարիան: Վրաստանն ու Ադրբեջանը գերագնահատում են իրենց դերակատարությունը: Իսկ եթե իրենք փորձեն փակել մեր ճանապարհը, իրենց գազամուղը 15 րոպեի ընթացքում շարքից դուրս կգա:

**- Պարոն Սեդրակյան, ասել եք, որ երբեք գործող որեւէ նախագահի ձայն չեք տվել, բայց նաեւ հայտարարել եք, որ նախորդ երեք նախագահները պետք է լինեն Ձեր խորհրդականները: Դուք ինչպե՞ս եք պատկերացնում այդ համագործակցությունը:**

- Բացարձակապես պարտադիր չէ համագործակցելը կամ ընդունելը: Ազգի եւ պետության առջեւ ծառացած խնդիրն այնքան լուրջ է, որ նախագահը միայնակ չի կարող լուծել: Սերժ Սարգսյանն էլ գիտի, որ փակուղում ենք: Պետք է միավորվենք: Կարծում եմ՝ իմ ասուլիսներին հետեւում են, տեղյակ են, ու ասեմ ձեզ, որ շատ թեկնածուներ կլորացած ու զարմացած աչքերով են հետեւելու ընտրության արդյունքներին:



**- Հայտարարել էիք, որ կհավաքեք 81% ձայն, սակայն նախորդ շաբաթ, «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության սոցհարցման արդյունքներով, դուք հավաքել եք 0,2% ձայն, իսկ «Ո՞ւմ ձայն չեք տա» հարցին ի պատասխան հավաքել էիք 32%:**

- Փաստորեն Հայաստանը եվրոպացի բարեկամներ էլ ունի՞: Բա էդ բարեկամները մարտի մեկին ո՞ւր էին: Իրենք չգիտե՞ն, թե նախագահն ինչ ճանապարհով է դարձել նախագահ: Ուզո՞ւմ եք, ես էլ սոցհարցում անցկացնեմ «Վարդան Սեդրակյանի բարեկամները» թեմայով ու էնպիսի թվեր բերեմ, որ դուք էլ զարմանաք: Ես 81% եմ հավաքելու: Դա 3 նախագահների հաղթանակն է, եւ իրենք պետք է այդ ձայները ապահովեն: Դա իրենց փրկության միակ ճանապարհն է, որովհետեւ եթե ես 54% ձայն հավաքեմ՝ իրենց համար շատ ծանր կլինի, ուրեմն իրենք խոչընդոտ են ստեղծել, չեն ընդունում չորս նախագահի ինստիտուտն, ու էդ ժամանակ կտեսնենք՝ ո՞ր նախագահն է խոչընդոտել, նա դուրս կմնա այդ ինստիտուտից:

**- Այդ վստահությունը Ձեզ որտեղի՞ց:**

- Ձեր դիմաց դրված գրքից (ցույց է տալիս «Սասնա ծռեր» էպոսը - Հ.Հ.):

**- Ո՞րը կլինի առաջին քայլը նախագահ ընտրվելուց հետո:**

- Այդ ինստիտուտի ձեւավորումը: Նախագահի աշխատակազմը կփոխեմ եւ այդ ինստիտուտը կլինի աշխատակազմին կից:

**- Որոշե՞լ եք վարչապետի, արտգործնախարարի, պաշտպանության նախարարի պաշտոնում ովքե՞ր են լինելու:**

- Չէ, չէ չէ: Ես կլուծարեմ խորհրդարանը, ու նոր խորհրդարանն ինքը կորոշի՝ ով ով է, ում ուզում են՝ թող դնեն, ուզում են՝ էս «պայթած» Բագրատյանին դնեն: Իմ նպատակն արդար ընտրություն անցկացնելն է: Կարեւորը ծրագիր ներկայացնելն է ու այն ժամանակացույցը, որով պետք է դա կատարեն:

**- Եթե էպոսի կերպարները համեմատենք ներկա քաղաքական կերպարների հետ՝ ո՞վ ո՞վ է:**

- Ես արտատեր պառավն եմ, իմ խնդիրը հիշեցնելն է, որ Մհերը զորք ուներ, իմ խնդիրը ազգին հիշեցնելն է, որ էպոս ու արժեքներ ունի: Ձենով Օհանը օրենսդիր իշխանությունն ու կուսակցություններն են: Թորոսը պատերազմի կուսակցությունն է, որ եկավ 98-ին՝ Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը, եւ 2008-ի ընտրությունները դա ցույց տվեցին: Վերգոն (Ցռան Վերգո, էպոսի կերպարներից: Ծ. խ.:) էլ կառավարությունն է: Սասունցի Դավիթ չկա, Մհեր՝ նույնպես:

**- Ո՞ւմ եք համարում մրցակից:**

- Իմ հիմնական մրցակիցն իմ բնավորության վատ գիծն է՝ ալարկոտությունը: Հենց էդ պատճառով զահլա չեմ անում գնամ ընտրարշավի: Ինձ համար ավելի նախընտրելի է բազկաթոռին նստած հետեւել, թե ով ուր է վազվզում: Իսկ թեկնածուներից ոչ մեկը չկա, քանի որ ես չեմ եկել մրցելու: Թե՞ կարծում եք, որ էդ հոգեկան հիվանդը հինգ տարին մեկ ութ միլիոն հավաքում, բերում տալիս է պետությանը: Արամ Հարությունյանը երրորդ ութ միլիոնն է տալիս պետությանը: Նման հոգեկան հիվանդ մարդու պատկերացնո՞ւմ եք: Որտեղի՞ց Արամ Հարությունյանին էդքան փող: Բոլոր թեկնածուներին էլ, բացառությամբ ինձ ու Անդրիաս Ղուկասյանի, Սերժ Սարգսյանն է փող տվել, ասել՝ առաջադրվեք: Ղուկասյանը կարգին տղա է: 8 թեկնածուներից երեքն են, որ իրենց խաղն են խաղում՝ Սերժը, ես ու Անդրիասը: Մյուսները կամ Սերժի պատճենն են՝ վազում են էստեղ-էնտեղ, մնում է Արամը, նա էլ ո՞ւր գնա, փորձում է կրկնօրինակել Անդրիասին:

**- Էպոսագետները լա՞վ են վաստակում:**

- Չէ, քանի որ մեր ակադեմիան պնդում է, որ մենք չունենք այդպիսի մասնագիտություն, ինձ ո՞վ պետք է վարձատրի: Բիզնեսով եմ զբաղվել, իմ կյանքով, կատարածով կարողանում եմ իմ ընտանիքը պահել: Որեւէ մեկն ինձ չի ֆինանսավորում, որ ես դաչա սարքեմ, ոնց որ տեսնում ենք օրինակներ:

**- Եթե դուք չընտրվեք՝ կշնորհավորե՞ք ընտրված նախագահին:**

- Եթե չկա, ես եմ ընտրվելու: Էդ քննարկելու խնդիր չէ:

**- Ի՞նչ կփոխանցեք ձեր ընտրողներին**

- Հիշեք, որ դուք հայ եք եւ վերեւում աստված կա:

Զրուցեց
ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

ԽԱՌՆԱԿ ՕՐԵՐ

# Քարերը ժայռի հանդիպեցան

Մեր օրերուն եթէ նամակատուներ դադրեցան ծանրաբեռնուած աշխատելէ, դարուս նորագոյն գործիքները խտասալերով զարգացած հեռախօսներու շարքին աւելի եւս աշխուժացան:

Եթէ զարգացումի այս դարուն եւ գազանութիւններու սահմռկեցուցիչ այս դարուն աշխարհի ամենահեռաւոր ծայրերէն լուրեր վայրկեաններու մէջ արդէն սփռուած ըլլան, ինչո՞ւ զարմանանք՝ եթէ մինչեւ անգամ, զաւակի հօր ու մօր ու սիրելիի մը հետ երես-երեսի խօսիլը եւ նոյնիսկ շաղակրատելը այնքա՜ն դիւրացած են:

Ուստի չենք զարմանար երբ Հալէպ ծնած եւ այժմ Վիեննա ապրող Մհեր Տաւուտեանը, որ այդ երկրին մէջ որպէս երգիչ կը մարզէ իր ձայնը Վիեննայի լաւագոյն երաժշտանոցներէն մէկուն մէջ, նոյն նորագոյն գործիքի մը առջեւ ու ամէն օր, ամէն օր խօսելով իր մօր, հօրը եւ եղբօրը հետ՝ նոյն հարցումը կրկնէ.-

- Մայրիկ, ինչպէ՞ս էք Հալէպի մէջ:

- Հայրիկ, ինչպէ՞ս էք Հալէպի մէջ:

- Եղբայրս, ինչպէ՞ս էք Հալէպի մէջ:

- Սիրելիներ, ապահո՞վ է մեր տան վայրը, ռումբեր տեղացած ունի՞ն հոն, փամփուշտի սուլոցներ կ՚անցնի՞ն մեր տան պատշգամէն, չըլլա՛յ, չըլլա՛յ որ այդ կոյր գնդակները ձեզի ալ հանդիպին:

Տաւուտեանները հարիւրաւորներ են աշխարհով մէկ սփռուած: Զաւակը իր հարազատներուն ապահովութեան մասին կը մտահոգուի, ծնողները՝ իրենց զաւակներուն:

Ծնողք ականջ տուած որոտներու ու սուլոցներու, նոյնպէս ամէն, ամէն օր կը հարցնեն որպիսութիւնը իրենց զաւակներուն, իրենց հեռաւոր հոգեհարազատներուն: Կարօտի զգացումը յոյսէն օգնութիւն կը խնդրէ:

Յոյսը երբեմն դիրք կը հաստատէ, երբեմն կը դառնայ սակայն ճրագ, հիւանդ սիրտի հեքտիկ վերիվայրումին պէս:

Պատերազմը կ՚անտեսէ կրօնական սուրբ տօներն անգամ: Ոչ ոք գիտէ ո՞ր անկիւնը ապահով է սուլող փամփուշտի մը, որոտացող ռումբի մը դիմաց:

Մհերը պիտի շարունակէ մարզել իր ձայնը, օր մը, ինչո՞ւ ոչ, երգելու համար Երեւանի ֆիլհարմոնիայի կամ օփերայի բեմէն, որպէսզի ազգը նոր ուժ մը տեսնէ ծնած Հալէպ եւ ուսանած երաժշտութեան բարձրագոյն կեդրոններէն՝ Վիեննայի մէջ, ծնողքը պիտի ուրախանայ Հալէպի մէջ, որ իրենց զաւակին ապագային համար ըրած են իրենց կարելին, եթէ Հալէպ առանց հրաւէրի եկած խուլիգաններ նոր խժդժութիւններու դուռ չբանան:

Հայրենի հողին վրայ պտուղները ծառէն հեռու չեն իյնար:

Օտարութեան մէջ Հալէպի ծառին պտուղները իյնալ սկսած են Կանադա, Ամերիկա, Աւստրալիա եւ աւելի հեռու...

Ահա թէ ինչո՛ւ, Հալէպի ու բովանդակ Սուրիոյ մէջ պատերազմը մեզ համախմբելու փոխարէն կը տարամիտէ, կը ցրուէ աշխարհով մէկ:

Մնացողները ժայռ են, յարձակողները պարսատիկի քար:

Այստեղ, քարերը ժայռի հանդիպեցան:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ
Հալէպ

ԱԶԳ **Միջազգային**

# Թե ինչպես 80-ամյա ծերունին «դարձավ «Կռունկ» կոմիտեի ակտիվիստ»

Ըստ երեւույթին Հայաստանում նախագահական ընտրություններն են առիթը, որ lent.az-ը նոր «պրոեկտ» է ստեղծել: Հեղինակը «ղարաբաղյան պատերազմի վետերան» Ռեյ Քերիմօղլուն է: Վերջինս «եղել է ազգային հերոս Շիրին Միրզոեւի հրամանատարության զորամասի հետախուզական վաշտի հետախույզ» եւ անձամբ մասնակցել է մարտական գործողությունների:

Իսկ ի՞նչ է հրապարակել «փորձառու հետախույզը»: Ընդամենը՝ երկու նամակ: Մեկը՝ ԼՂՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին, մյուսը՝ Մարտակերտի շրջանի գործկոմի նախագահ Վահան Գաբրիելյանին: Դրանք գրվել են 1992 թ. մարտի 7-ին, Աղդամի շրջանի Ալիմադաթլի գյուղից: Հեղինակը Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղի բնակիչ Բարխուդար Ասատուրի Հարությունյանն է: Քերիմօղլուն նրան ներկայացնում է որպես ««Կռունկ» կոմիտեի ակտիվիստի, 75-80 «զինառյալի» (չակերտները մերն են - Վ. Ա.) հրամանատարի»:

Նամակների բովանդակությունը նույնն է՝ Հարությունյանը Սերժ Սարգսյանին եւ Վահան Գաբրիելյանին խնդրում է «կազմակերպել 11 հոգու՝ 3 տղամարդու եւ 8 կնոջ փոխանակություն», որ Ղազանչին ադրբեջանցիների կողմից գրավվելուց հետո հայտնվել էին գերության մեջ: Նա գրում է, որ «պայմանները անտանելի են, եւ եթե փոխանակում չկազմակերպվի, բոլորը կմեռնեն»:

Որեւէ արտառոց բան չկա, որ գերության մեջ հայտնված մարդուց ադրբեջանցիները նման բովանդակությամբ նամակ են կորզել: Ավելին, նամակները վկայում են, որ ադրբեջանական կողմը գերեվարված հայերին պահել է անտանելի պայմաններում: Նողկալին Ռեյ Քերիմօղլուի կեղծարարությունն է: Բանն այն է, որ Բարխուդար Հարությունյանին ճանաչել են ողջ Մարտակերտի շրջանում: Գուցե թե՝ նաեւ Արցախում. նա այն եզակի հայ տղամարդկանցից մեկն էր, որ բաժանվել էր հայ կնոջից եւ ամուսնացել ադրբեջանուհու հետ: Ընդ որում, տասնամյակներ շարունակ Բարխուդար Հարությունյանը ադրբեջաներեն եւ ռուսաց լեզուների ուսուցիչ է աշխատել Մանիքլու, Գարաշիլար եւ այլ ադրբեջանաբնակ գյուղերում:

1992 թ. մարտի 4-5-ին, այո, Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղը ենթարկվել է ադրբեջանական զինված ուժերի հարձակմանը, բայց Բարխուդար Հարությունյանը եւ մյուս գերեվարվածները ոչ թե «Կռունկ» կոմիտեի «ակտիվիստ», առավել եւս՝ «զինառյալներ» էին, այլ՝ 70-80 տարեկան ծերեր, ովքեր տարվել են, ինչպես պարզվում է Քերիմօղլուի հրապարակումից, նախ Ալիմադաթլու գյուղ, ապա՝ Շահբուլաղ:

Այդ մարդկանց հետագա ճակատագրին մենք արդեն անդրադարձել ենք: Կրկնենք՝ 11 գերեվարվածներից ոչ ոք կենդանի հայկական կողմին չի վերադարձվել: Կատարվել է դիակների փոխանակություն: Ընդ որում, Բարխուդար Հարությունյանի դիակը, ինչպես վկայում է փոխանակման կազմակերպիչներից ոստիկանության պաշտոնաթող գնդապետ, ծնունդով Ղազանչի գյուղից Վլադիմիր Ավագիմյանը, «դուրս է բերվել կրակից՝ածխացած վիճակում»: Ավագիմյանը վկայում է, որ Հարությունյանին եւ մի քանի ծերերի նախապես խոշտանգել են, ապա կենդանի նետել կրակների բոցերի մեջ: Փաստորեն մարդկանց ողջակիզել են:

Այդ հանցագործության կազմակերպիչներից մեկը՝ Ռեյ Քերիմօղլուն, այսպիսով, բացահայտված է: Եվ հարկ է սույն փաստը ներկայացնել միջազգային իրավապաշտպան եւ լրագրողական կազմակերպություններին: Քերիմօղլուն փորձագետի համարում ունի նաեւ Խոջալուի դեպքերի կապակցությամբ: Նրա հեղինակած նյութերին հղում են անում տարբեր հեղինակներ: Հանգամանքը, որ նա մասնակցել է Ղազանչի գյուղից 11 խաղաղացիական անձանց խոշտանգումներին, իսկ դեպքերից 21 տարի անց փորձում է 80-ամյա ծերունուն՝ Բարխուդար Հարությունյանին ներկայացնել իբրեւ «գերված զինառյալի, «Կռունկ» կոմիտեի ակտիվիստի», պետք է դառնա համաշխարհային հանրային կարծիքի սեփականությունը:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ նյութերի հիման վրա ԼՂՀ դատախազությունը կարող է ռազմական հանցագործություն կատարած լինելու փաստով քրեական գործ հարուցել Ռեյ Քերիմօղլուի դեմ եւ հետամուտ լինել, որպեսզի Ինտերպոլը նրա հանդեպ հայտարարի միջազգային հետախուզում:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Սամաթիայի հարձակումները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի յուրահատուկ պատրաստությունն են

*1-ին էջից*

Առաջին հայացքից գուցե ժամանակավրեպ թվա, բայց նրանց ելույթները հստակ պատկերացում են տալիս Սամաթիայում հայ կանանց դեմ իրականացվող հարձակումների ռասիստական բնույթի մասին, բացահայտում են դրանց առաջադրանքը եւ ամբողջացնում թուրքական պետության այս հարձակումներով հետապնդած նպատակների վերաբերյալ մեր պատկերացումները:

Որո՞նք են դրանք: Նախքան հարցին պատասխանելն անդրադառնանք Նիլայ Վարդարի հունվարի 27-ին «Բիանեթում» հրապարակված հոդվածին: Հեղինակը նշում է Ստամբուլի, մասնավորապես Սամաթիայի հայության ահաբեկվածության ու շփոթվածության մասին: Գրում է, որ խաչի նշանով թռուցիկներ են գցում հայերի տների դռանը, երեկոյան վերջիններս վախից չեն կարողանում դուրս գալ, չնայած չգրանցված այլ հարձակումների մասին բերնեբերան տարածվող լուրերին, ոստիկանությունն առ այսօր հապաղում է անվտանգության միջոցառումներ իրականացնել Սամաթիայում, թողնելով անպաշտպան ե՛ւ եկեղեցին, ե՛ւ հայ բնակիչներին:

Համենայն դեպս, հարձակումներով թուրքական պետության հետապնդած նպատակների մասին Սամաթիայի հրապարակում արտահայտվել է «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսի» Ստամբուլի վարչության անդամ Ահմեդ Սայմադին, հրապարակելով իր կազմակերպության հարձակումների առնչությամբ հաղորդագրությունը:

Նա, համարելով հարձակումները ռասիստական, ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ մինչեւ տկն Մարիցայի սպանությունը, հարձակումների առնչությամբ իրավապահ մարմինները որեւէ հետաքննություն չեն սկսել եւ ավելացրել է. «Այս հարձակումներում ոստիկանությունը հանցակից է»: Սայմադին ավելացրել է. «Հարձակումներով մասնանշվում է այն քաղաքականության բնույթը, որը մեր պետությունը պատրաստվում է վարել մինչեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հանդիսացող 2015 թվականը»:

Նրան հետեւել է Քյուրքչուն: Նա հնարավոր է համարել, որ հարձակումների պատասխանատուն հենց իրավապահ մարմինները լինեն եւ դատապարտել է ներքին գործերի նախարարության անգործությունը: Քյուրքչուին հավելել է տկն Թունջելը: Նա խոսքն ուղղելով թուրքական կառավարությանը, հայտարարել է. «Մեկ լեզու, մեկ կրոն, մեկ ազգ» ասելով, ընդամենը ատելություն եք սերմանել երկրում: Մինչդեռ բազմակրոն, բազմամշակույթ եւ բազմազգ Թուրքիայում ժողովուրդները պետք է եղբայր լինեն ու իրավահավասար»:

Հասկանալի է, որ Սամաթիայի հարձակումները «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսի» ներկայացուցչի նման Մեծ եղեռնի 100-րդ տարելիցով է պայմանավորել նաեւ հարցումով Մեջլիսի նախագահություն դիմած Ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահի Թանրըքուլուն, նույնպես համարելով ռասիստական: Նա մասնավորապես ընդգծել է. «Հայ քաղաքացիների նկատմամբ իրականացվող ռասիստական հարձակումների աճը կամա թե ակամա մեզ հիշեցնում է 1915-ի մոտեցող 100-րդ տարելիցը: Եթե այդ հարձակումները կազմակերպված բնույթ ունեն, անհապաղ պետք է բացահայտել այդ կազմակերպությանն ու դատաստանի առջեւ կանգնեցնել մեղավորներին: Այլապես, կստեղծեն կազմակերպվածության տպավորություն գործող այս հարձակումների շարունակականության համար անհրաժեշտ նախադրյալներ: Դա կխորացնի հայ քաղաքացիների կյանքի ու գույքի անվտանգության մտավախությունը: Չմոռանալ, որ հարձակումների շարունակման դեպքում դրա պատասխանատուն կառավարությունն է լինելու:

ՊՈՐՏ-ՍԱՅԻԴ-ՍՈՒԷԶ

# Եգիպտոսում բախումները շարունակվում են արտակարգ դրության պայմաններում



Եգիպտոսի Պորտ-Սայիդ եւ Սուեզ քաղաքներ են բերվել բանակային ստորաբաժանումներ: Այդ քաղաքներում իշխանությունների քաղաքականության դեմ ուղղված զանգվածային ցույցեր են իրականացվում նույնիսկ կիրակի օրվանից գործող արտակարգ դրության պայմաններում: Դրանք սկսվեցին հեղափոխության 2-րդ տարեդարձի օրը՝ հունվարի 25-ին: Ցուցարարների եւ ոստիկանության բախումների ընթացքում արդեն 50 մարդ է սպանվել: Ցուցարարները ներկայիս նախագահ Մուհամմեդ Մուրսիին մեղադրում են հեղափոխության իդեալներին դավաճանելու մեջ: Լույս երեքշաբթի գիշերը տասնյակ ցուցարարներ փորձել են Կահիրեում ներխուժել նահանգապետարան, որը նախագահական պալատներից մեկի մոտ է: Հարձակվողներին ցրելու նպատակով ոստիկանությունը գործի է դրել արտասվաբեր գազ, օդում նախազգուշական կրակոցներ արձակել: Բախումներից հետո ցուցարարների մի մասը հեռացել է «Թահրիր» հրապարակի կողմը:

Հրապարակի անմիջական մերձակայքում երեկ շարունակվում էին բողոքի ցույցերի մասնակիցների եւ ոստիկանության բախումները: Մերձակա Քասր էն Նիլ փողոցը պատված էր արտասվաբեր գազի նռնակների եւ ծխագլանիկների ծխով: Ցուցարարները ոստիկանների վրա նետում էին քարեր եւ հրկիզախառնուրդով լի շշեր: Չնայած մեկ ամսով հաստատված արտակարգ դրությանը, Սուեզ եւ Իսմայիլիա քաղաքների փողոցներում շարունակվում են բողոքի ելույթները իսլամիստների քաղաքականության դեմ:

Պորտ-Սայիդ քաղաքում, որտեղ շաբաթ օրը սկսված անկարգությունների ընթացքում առնվազն 40 մարդ է սպանվել եւ 1,5 հազարն էլ վիրավորվել է, հազարավոր մարդիկ հավաքվում են հրապարակներում, անտեսելով նախագահի Մուրսիի հրամանագրերը եւ պահանջելով նրա պաշտոնաթողությունը: Լույս երեքշաբթի գիշերը քաղաքի բնակիչները փորձել են գրավել ոստիկանական տեղամասերից մեկը: Հարձակման ժամանակ սպանվել է երկու ցուցարար:

Որպես «Մուսուլման եղբայրներ» կուսակցության թեկնածու, անցյալ տարի նախագահ ընտրված Մուհամմեդ Մուրսին կիրակի օրը ընդդիմությանը երկխոսության կոչ էր արել: Հունվարի 28-ին նրա նախաձեռնած համազգային երկխոսության շրջանակներում տեղի է ունեցել առաջին հանդիպումը, որի ընթացքում որոշվել է ստեղծել հատուկ իրավական հանձնաժողով, որը պետք է քննության առնի երկրի նոր սահմանադրությանն առնչվող վիճելի հարցերը: Հանձնաժողովի կազմում կընդգրկվի 10 մարդ՝ հինգ փորձագետ եւ նույնքան էլ քաղաքական գործիչ: Նրանք իրենց աշխատանքի արդյունքները կներկայացնեն կազմավորվելիք Ներկայացուցիչների խորհրդի քննարկմանը:

# Սովյալ ԿԺԴՀ-ում շատացել են մարդակերության դեպքերը

Միջազգային լրատվամիջոցները հաղորդում են, որ մամուլ թափանցած գաղտնի տեղեկությունների համաձայն, ԿԺԴՀ-ում կտրուկ ավելացել է մարդակերության դեպքերի թիվը: Դա համարվում է երկրում տիրող սովի հետեւանքներից մեկը: Մասնավորապես բրիտանական «Դեյլի Նեյլ» թերթը հաղորդում է, որ օրերս իշխանությունները մահապատժի են ենթարկել Հվանհե գյուղատնտեսական նահանգի մի բնակչի, որը սպանել եւ եփել էր իր երկու զավակներին:

Թերթի տվյալներով, այդ նահանգում սովի զոհերն են դարձել մոտ 10 հազար անձինք, որոնց մի մասին սպանել եւ կերել են իրենց մերձավորները: Նման դեպքերի մասին հաղորդում է նաեւ AsiaPress կայքէջը:

Անհաջող բերքի հետեւանքով ծագած սովը խորանում է նաեւ նրանով, որ պաշտոնյաները բռնագրավում են գյուղացիների պարենը եւ այն տեղափոխում մայրաքաղաք, իսկ ԿԺԴՀ առաջնորդ Կիմ Չեն Ինը վիթխարի գումարներ է ծախսում միջուկային մարտագլխիկներ փորձարկելու համար:

Միայն վերջին մի քանի ամիսներին հայտնի դարձավ երկու հրթիռների արձակման եւ նախատեսվող միջուկային փորձարկման մասին: Վերջինս կիրականացվի ի նշան բողոքի ընդդեմ ՄԱԿ-ի ԱԽ հակակորեական պատժամիջոցների: «Իզվեստիա» թերթը մեջբերում է ԿԺԴՀ առաջնորդի հետեւյալ հայտարարությունը. «Արբանյակները եւ մեծ հեռահարության հրթիռները, ինչպես նաեւ առաջիկա միջուկային փորձարկումները ուղղված կլինեն մեր երդվյալ թշնամու՝ ԱՄՆ-ի դեմ»:

ԶԼՄ-ները հիշեցնում են, 1990-ականներին ԿԺԴՀ-ն ճարակած ահավոր սովի մասին, որի տարիներին, տարբեր տվյալների համաձայն, զոհվեց 240 հազարից մինչեւ 3,5 մլն մարդ:

ԱՀԱԶԱՆԳ

## Լոնդոնի պատմության թանգարանը խեղաթյուրում է պատմական փաստերը

**Հարգելի ազգակիցներ.**

Բազմիցս խոսվել եւ գրվել է հայոց պատմության, հայկական մշակութային արժեքների (նյութական թե հոգեւոր), մեր ինքնության մի անբաժանելի մասը կազմող փաստերի եւ երեւույթների կեղծման եւ յուրացման փորձերի մասին: Դրա եռանդուն նախաձեռնողներն ու թաքուն իրականացնողները բոլոր ժամանակներում վայելել եւ վայելում են թուրքական պետական մարմինների գաղտնի թե բացահայտ օժանդակությունը:

Սակայն, մեկ բան է, երբ աներկբայորեն մեր սեփականն հանդիսացող արժեքները կեղծվում են անհատների կամ շահագրգիռ կազմակերպությունների կողմից, մեկ այլ` երբ նման անբարո քայլեր իրենց թույլ են տալիս ամբողջ պետություններ: Ցավոք, քիչ չեն այդպիսիք, եւ հիմա, ցանկանում ենք հայոց իշխանությունների, հայկական բոլոր կազմակերպությունների, աշխարհասփյուռ հայության ուշադրությունն ու զգոնությունը սեւեռել նման մի փաստի վրա.

Լոնդոնի պատմության թանգարանի սրահներից մեկում տեղադրվել են Հայոց Արարատյան թագավորության շրջանի պեղածոները, որտեղ, ցուցադրվող նմուշները ներկայացված են «Անտիկ Թուրքիա (Ancient Turkey)» խորագիրը կրող ցուցանակի ներքո:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տասնամյակներ շարունակ մեր ինքնությունը ոտնահարելու փորձ անողների դեմ անհաս մտավորականների բողոք-դիմումները անցել են, իբրեւ «ձայն բարբառո յանապատի», կոչ ենք անում սեփական ազգային արժեքների պահպանմանը նախանձախնդիր բոլոր հայորդիներին.

Միավորվել` ընդդեմ նմանատիպ կեղծիքների բոլոր փորձերի.

Միասնական բռունցք դառնալ` ընդդեմ թուրքական քարոզչամեքենային ծառայող բոլոր ծախու «գիտնականների».

Նկատի ունենալով, որ սա միակ դեպքը չէ, երբ արդեն պետական մակարդակով են փորձում մեզանից օտարել մեր նախնիների ժառանգությունը, եւ բրիտանական իշխանություններն արդեն դրա փորձն ունեն` կոչ ենք անում.

Ակտիվորեն արձագանքել առաջիկայում կազմակերպվելիք բողոքի ակցիաներին`

Ընդդեմ լոնդոնյան թանգարանում կազմակերպված ճչացող անարդարության.

Հայաստանյան իշխանությունների կողմից ցուցաբերած անտարբերության.

Ցույց տանք աշխարհին` հանուն պատմական արդարության վերականգնման եւ մեր ազգային արժանապատվության պաշտպանության` Հայոց միասնական կամքի զորեղ ուժը:

Լրացուցիչ տեղեկությունների կամ Ձեր կարեւոր մասնակցությունը բերելու համար կարող եք գրանցվել Facebook-ի այս էջում...

https://www.facebook.com/groups/458584514177364/

Հարկավոր է գործել նախօրոք համաձայնեցված, որպեսզի հաղթանակը լինի ապահովված այս մեր ազգանվեր եւ արդար գործում:

## «AP» cinema կինոընկերությունը` նոր բարեգործական ծրագրով




Օրերս «AP» cinema կինոընկերությունը հանդես եկավ բարեգործական ծրագրով. «Շնորհավոր Ամանոր, մայրեր» ֆիլմի վերջին ցուցադրությանը Երեւանում ներկա գտնվեցին մանկատան երեխաները: «AP» cinema կինոընկերության տնօրեն **Վալերի Սահարյանը** դեմ էր բարեգործական ծրագրի լուսաբանմանը, ըստ նրա դա նմանվում է գովազդի, որը չի ցանկանում:

«**Ազգը**» զրուցեց «Օրրան» բարեգործական կազմակերպության ցերեկային կենտրոնի երեխաների հետ, որոնցից Արմեն Գրիկուրովը ֆիլմը դիտելով շատ էր հուզվել. «Հետաքրքրական ֆիլմ է, համոզված եմ բոլորին դուր եկավ: Ուրախ եմ, որ մարդիկ այսպիսի ֆիլմ են ստեղծել եւ կցանկանայի նման ֆիլմեր շատ լինեին»: Աննա Պետրոսյանին եւս ֆիլմը շատ է դուր եկել, ըստ նրա կինոալմանախը ուսուցողական էր. «Երեխաները, որոնք իրենց մայրիկներին չեն սիրում կամ լավ չեն վերաբերվում, ֆիլմը դիտելով կվերանայեն իրենց արարքները եւ ավելի լավ կվարվեն մայրերի հետ»: Աննան կարծում է նաեւ, որ ֆիլմում առկա բաց տեսարանը չէր համապատասխանում կինոալմանախին, բայց այդպես չի մտածում «Օրրան» բարեգործական կազմակերպության մանկավարժ **Լիանա Բարեղամյանը**. «Հետեւելով ֆիլմին, կարող եմ հստակ ասել, որ բաց տեսարանները չափի մեջ էին եւ ոչ մի ավելորդություն չկար: Եթե ինչ-որ բաց տեսարաններ էլ կային, ապա երեխաների տարիքին համապատասխան էին»:

«Օրրանի» սաներից **Մոնիկա Բարսեղյանն** էլ ցանկանում էր ֆիմը երկրորդ անգամ նայել, քանի որ շատ էր հավանել:

Մանկավարժ Լիանա Բարեղամյանն «**Ազգին**» տեղեկացրեց, որ «AP» cinema կինոընկերությունն առաջին անգամ չէ, որ նման բարեգործական ծրագրով է հանդես գալիս. «Մի անգամ էլ «AP» cinema կինոընկերությունը բարեգործական բերքահավաք էր կազմակերպել: Միշտ չէ, որ մանկատան երեխաները հնարավորություն են ունենում այսպիսի հաճույքներից օգտվելու, շնորհակալ ենք նրանց, որ ընձեռեցին նման հնարավորություն»:

Նշենք, որ ֆիլմը բաղկացած է հինգ նովելից, որոնցից յուրաքանչյուրը նկարահանել է առանձին ռեժիսոր` Արտեմ Ակսենենկո, Սարիկ Անդրեասյան, Անտոն Բորմատով, Դմիտրի Գրաչեւ, Կլիմ Պոպլավսկի:

«Շնորհավոր Ամանոր, մայրեր» կինոալմանախը հանդիսատեսի մեծ համակրանքը վայելած «Մայրեր» ֆիլմի շարունակությունն է: Ֆիլմը նկարահանվել է Ռուսաստանում եւ Ֆրանսիայում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Բարի քաղաքի հայոց խաչքարը

## *Հայկական գորգի արտադրությունից մինչեւ խաչքարի տեղադրում*

Այս տարվա հունվարի 11-ը ընդմիշտ կմնա ոչ միայն Իտալիայի Բարի քաղաքի, այլեւ իտալահայ համայնքի ներկայացուցիչների ու հայ առաքելական եկեղեցու Հռոմի ու Միլանի հովվապետների հիշողություններում: Հանդիսությունը, անշուշտ, պատահական չէր, Բարի քաղաքի ընտրությունը` նույնպես: Մի կողմ թողնելով Պուլիա նահանգի եւ հայերի պատմամշակութային ու ճարտարապետական առնչությունները, ինչպես նաեւ իտալացիների ու հայերի բարեկամության հազարամյա կապերը, նաեւ այսօր առկա բազմաթիվ վկայությունները, հարկ է վերադառնալ մեր պատմության ամենաողբերգական շրջանին` Հայոց մեծ եղեռնին: Ամենից առաջ պետք է հարգանքի տուրք մատուցել հայազգի ճանաչված բանաստեղծ, հասարակական գործիչ Հրանտ Նազարյանցին, որի անունը կրող մշակութային ընկերությունը Բարի քաղաքում գործում է ավելի քան երեք տարի:



*Ճարտարապետ Աշոտ Գրիգորյանը իր հեղինակած խաչքար-կոթողի մոտ Բարիում:*

1913-ին Նազարյանցը Պոլսից տեղափոխվում է Բարի, ուր ապրում է մինչեւ իր կյանքի վերջը: Նազարյանցի` Պոլսում ապրած տարիները համընկնում են գրական ու մշակութային այնպիսի մի ժամանակաշրջանի, երբ ստեղծագործում էին ականավոր հայ գրողներ Եղիա Տեմիրճիպաշյանը, Միսաք Մեծարենցը, Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Երվանդ Օտյանը, Գեղամ Բարսեղյանը, Վահան Թեքեյանը, Կոստան Զարյանը: Իտալիայում Հրանտ Նազարյանցի հաստատվելուց մոտ մեկ տարի անց, վրա է հասնում Առաջին համաշխարհային պատերազմը, որին հաջորդում է Մեծ եղեռնը: Փաստորեն Նազարյանցը կորցնում է իր լավագույն գրչընկերներին ու հայտնվում բոլորովին մեկուսացած ու անօգնական օտար մի երկրում: Իր տաղանդի, ինչպես նաեւ իտալերեն գրված ու հրատարակված բանաստեղծությունների շնորհիվ նա ճանաչում է ձեռք բերում Իտալիայի գրական ու մշակութային շրջաններում` արժանանալով այնպիսի անվանի գրողների գնահատանքին, ինչպիսիք էին Ջուզեպե Ջելարդին, Կարդիլեն, Ջանպետրո Լուչինին, Ալեքսանդր Ֆերդինանդո Ռոսոն, Դինո Ֆինցան: Այնուհետեւ, թարգմանաբար նա իտալացի ընթերցողին է ներկայացնում հայ արձակագիրների բազմաթիվ ստեղծագործություններ: 1916 թվականին Բարիում Էնրիկո Կարդիլեի թարգմանությամբ լույս է տեսնում «Խաչված երազներ» գիրքը: 1924 թվականին Հրանտ Նազարյանցի ջանքերի շնորհիվ եւ Պուլիա նահանգի պաշտոնյա անձանց հովանավորությամբ ու աջակցությամբ, հնարավոր է դառնում հյուրնկալել ու կացարաններ տրամադրել եղեռնից հրաշքով փրկված մոտ երկուհարյուր տարագիր հայերի: Երկու տարի անց Բարիի արվարձանում հիմնվում է Նոր Արաքս անունը կրող ավանը, ուր շուտով սկսում է գործել հայ գորգագործական մի ձեռնարկություն: Հայկական գորգերը մեծ ճանաչում են ստանում ու դրանց առաքումը տարածվում է Բարիի սահմաններից դուրս: Ի դեպ, Նոր Արաքսի գորգագործական արհեստանոցի գորգերով ու կարպետներով են զարդարվել Վիտորիո Էմանուելե Գ թագավորի արքայական գնացքի ներքին սրահները: Այսօր, ցավոք, միայն մեկ հայ ընտանիք է ապրում նախկինում մեծ համբավ վայելած հայկական Նոր Արաքս ավանում: Ժամանակի ընթացքում շատ ընտանիքներ տեղափոխվել են Բարիի հին թաղամաս կամ մեկնել Իտալիայի այլ քաղաքներ, նաեւ` այլ երկրներ` նոր ապրուստ ու ապահով աշխատանք որոնելու նպատակով:

2001 թվականին, Իտալիայում ՀՀ դեսպան Գագիկ Բաղդասարյանի շնորհիվ, բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Հայաստանի ու Իտալիայի Պուլիա նահանգի միջեւ բարեկամական ու գործնական համագործակցության զարգացման համար: Բարիի քաղաքապետարանը հատուկ որոշում կայացրեց քաղաքում հայ-իտալական բարեկամությունը խորհրդանշող հուշարձան կանգնեցնելու մասին: Հուշարձանի նախագծի հեղինակ` ճարտարապետ Աշոտ Գրիգորյանը տեղական քարից քանդակեց նրբագեղ մի խաչքար, որը խորհրդանշում է երկու ժողովուրդների քրիստոնյա հավատը: Տեղի քաղաքական ու տնտեսական փոփոխվող եւ անբարենպաստ պայմաններից ելնելով, պատրաստի հուշակոթողը երկար տարիներ մոռացության էր մատնվել, իսկ նրա տեղադրումը տարեց-տարի հետաձգվում էր: Միայն երկու տարի առաջ Բարիի հայ համայնքի առաջատար Ռուբեն Թիմուրյանի բարեհոգության եւ քաղաքապետի հոգածության շնորհիվ հնարավոր դարձավ քաղաքում տեղ հատկացնել ու կազմակերպել խաչքար-կոթողի հանդիսավոր բացման արարողությունը: Այս տարվա հունվարի 11-ը դարձավ Բարիի բնակիչների եւ հայերի բարեկամության ու մշակութային կապերի պահպանման ու զարգացման իսկական տոն:

Վաղ առավոտից սպիտակ սավանով ծածկված խաչքար-կոթողի տարածքը բազմամարդ էր: Ներկա էին Բարիի քաղաքապետ Դոն Միքելե Էմիլիանոն, քաղաքի բնակիչները, տեղի, ինչպես նաեւ Իտալիայի այլ քաղաքներից ժամանած հայ համայնքի ներկայացուցիչները, ՀՀ դեսպանության խորհրդատու` Բորիս Սահակյանը, Իտալիայի Հայ միության նախագահ` Պայքար Սվազլյանը, հուշարձանի հեղինակը` ճարտարապետ Աշոտ Գրիգորյանը, Հռոմի ու Միլանի Հայ առաքելական եկեղեցու հովիվներ Հայր Թովմա Խաչատրյանը, Հայր Գառնիկ Մխիթարյանը, Բարիի Սուրբ Նիկոլա տաճարի հայր Լորենցո Լորուսսոն, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, զանգվածային լրատվամիջոցների աշխատակիցներ, հյուրեր:

Բացման խոսքով հանդես եկավ Բարի քաղաքի հայ համայնքի առաջնորդ Ռուբեն Թիմուրյանը, որն իր շնորհակալությունը հայտնեց քաղաքապետարանին, հուշարձանի հեղինակին, նաեւ բոլոր նրանց, ում շնորհիվ հնարավոր դարձավ խաչքար-կոթողի տեղադրումը: Երախտագիտության ու հայ-իտալական բարեկամության մասին խոսեցին Բարիի քաղաքապետը, ՀՀ դեսպանության խորհրդատուն, Սուրբ Նիկոլա եկեղեցու առաջնորդը, որից հետո հայ առաքելական եկեղեցուն բնորոշ արարողակարգով օրհնվեց խաչքար-կոթողը` նշելով, որ այն միշտ պահապան լինի Բարիի բնակիչներին, հսկի նրանց անդորրը:

Խաչքար կոթողի բացման պաշտոնական արարողությունից հետո քաղաքապետ Դոն Միքելե Էմիլիանոն մասնակիցներին հրավիրեց քաղաքապետարանի նիստերի դահլիճ, որտեղ տեղի ունեցավ խորհրդակցություն եւ պարգեւների փոխադարձ հանձնում: Լեցուն դահլիճում հավաքված հասարակությունն ունկնդրեց Պուլիա նահանգի ներկայացուցիչ, դոկտոր Կոսկայի, Ռուբեն Թիմուրյանի, Բորիս Սահակյանի, հայր Թովմա Խաչատրյանի ու հայր Գառնիկ Մխիթարյանի, «Հրանտ Նազարյանց» մշակութային կենտրոնի քարտուղար, պրոֆեսոր Կառլո Կոպալայի եւ պատմաբան, պրոֆեսոր Անտոնիո Լեուցիի, Քասամասիմայի քաղաքապետարանի խորհրդատու Ֆրանչեսկո Լարիֆիայի եւ կոթողի հեղինակ Աշոտ Գրիգորյանի ելույթները: Խաչքար-կոթողի բացման արարողությունն ավարտվեց Բարիի քաղաքապետարանում կազմակերպված հյուրասիրությամբ:

Բարիի հայ համայնքը ծրագրում է իրականացնել հրաշալի մի ծրագիր եւս` քաղաքի կենտրոնական այգում տեղադրել «Հրանտ Նազարյանցի» հուշարձանը: Հուսանք, որ քաղաքի բնակիչներն առաջիկայում կստանա հայազգի բանաստեղծի հիշատակը հավերժացնող մի գողտրիկ անկյուն եւս:

ԱՐԱ ԶԱՐՅԱՆ
Միլանո-Վենետիկ

# Հենրիխ Մխիթարյան. «Գոլային պահերի իրացումը մի փոքր կաղում է»

***Իտալիայում անցկացվող Copa del Sol մրցաշարում Դոնեցկի «Շախտյորը» 2-րդ հաղթանակը տոնեց՝ 1-0 հաշվով պարտության մատնելով Նորվեգիայի բազմակի չեմպիոն «Ռոզենբորգին»: Թիմին հաղթանակ պարգեւեց 79-րդ րոպեին Կոստայի խփած միակ գնդակը: 2 խաղից հետո վաստակած 6 միավորով «Շախտյորը» դարձավ մրցաշարի առաջատար: Թիմի կազմում ողջ հանդիպմանը մասնակցեց Հենրիխ Մխիթարյանը, որը խաղից հետո սիրով լուսանկարվեց իտալացի եւ ուկրաինացի ֆուտբոլասերների հետ, իսկ այնուհետեւ հարցազրույց տվեց ակումբի պաշտոնական կայքին:***




**- Այսօր «Ռոզենբորգը» փորձում էր «Շախտյորի» գրոհներին պատասխանել հակագրոհներով: Այդ թիմի հետ հանդիպումն ավելի հետաքրքրակա՞ն էր, քան «Գյոթեբորգի» հետ կայացած նախորդ խաղը:**

- Այո, այսօրվա խաղն ավելի հետաքրքրական պայքարում ընթացավ: Սակայն ինչպես նախորդ խաղում, այս անգամ էլ բավականին դժվար էր, մրցակիցը կրկին շատ կազմակերպված էր գործում: Բայց կարեւորն այն է, որ մենք գրոհների կազմակերպման եւ դրանց եզրափակման համար տարածություն ենք գտնում: Ճիշտ է, մի փոքր կաղում է գոլային պահերի իրացումը, սակայն կարծում եմ, որ հաջորդ հանդիպումներում այդ հարցն էլ կկարգավորվի:

**- Ուսումնամարզական հավաքի ընթացքում առաջին անգամ թիմի խաղացողների մեծամասնությունը մասնակցեց ողջ հանդիպմանը: Դա հատո՞ւկ փորձություն էր:**

- Այո, Միրչա Լուչեսկուն որոշ ֆուտբոլիստների հնարավորություն է ընձեռում խաղալ 90 րոպե, մյուսներին թույլ է տալիս հանգստանալ: Շուտով սկսվելու են պաշտոնական հանդիպումները եւ մեզ հարկ կլինի 3 օրը մեկ խաղադաշտ դուրս գալ: Այնպես որ մարզիչը մեզ նախապատրաստում է նման խաղացանկին:

**- Դիմանո՞ւմ եք: Չէ՞ որ ծանրաբեռնվածությունը բավականին մեծ է՝ հաշվի առնելով նաեւ անցկացվող ստուգողական հանդիպումների քանակը:**

- Իհարկե, դժվար է, սակայն հարկավոր է խաղալ ու նախապատրաստվել: Միայն տքնաջան մարզումների շնորհիվ կարող ես լավ մարզավիճակ ձեռք բերել: Այնպես որ պետք է հարմարվել նման ծանրաբեռնվածությանը:

**- Այսօր զգացվո՞ւմ էր ֆուտբոլասերների աջակցությունը:**

- Այո: Հաճելի էր տեսնել ուկրաինացի ֆուտբոլասերներին ընկերական մրցախաղում:

# Մեսին շարունակում է նոր ռեկորդներ սահմանել

Իսպանական «Բարսելոնի» արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին շարունակում է իր գերարդյունավետ խաղը՝ սահմանելով նոր ռեկորդներ: Առաջնության 21-րդ տուրում նա 4 անգամ գրավեց «Օսասունայի» դարպասը՝ գոլերի թիվը հասցնելով 33-ի: «Ոսկե գնդակի» դափնեկիրն Իսպանիայի առաջնություններում հատեց 200 գոլի սահմանագիծը: Անցկացրած 235 խաղում նա արդեն 202 գոլ է խփել: Մեսին առաջնության վերջին 11 հանդիպումներում դաշտից չի հեռանում առանց գոլի՝ իր օգտին գրանցելով 20 գոլ: Դա Իսպանիայի առաջնությունների նոր ռեկորդ է: Նախկինում Մարիանո Մարտինին եւ բրազիլացի Ռոնալդոյին էր հաջողվել առաջնության 10 անընդմեջ խաղում գոլի հեղինակ դառնալ:




Ներկայումս Լիոնել Մեսին 33 գնդակով գլխավորում է Իսպանիայի առաջնության լավագույն ռմբարկուների ցուցակը: Նա նաեւ Եվրոպայի լավագույն ռմբարկուի համար սահմանված «Ոսկե խաղակոշիկ» մրցանակի համար մղվող պայքարում է ընթանում առջեւում: Առաջնության 2-րդ ցուցանիշն ունի պորտուգալացի Քրիշտիանու Ռոնալդուն, որը 21 անգամ է գրավել մրցակիցների դարպասները: 18 գոլի հեղինակ է Մադրիդի «Ատլետիկոյի» ռմբարկու Ռադամել Ֆալկաոն:

Ի դեպ, Քրիշտիանու Ռոնալդուն էլ 21-րդ տուրում աչքի ընկավ արդյունավետությամբ: Նա «Խետաֆեի» հետ խաղում հեթ-տրիկի հեղինակ դարձավ: Դա մարզական կարիերայում պորտուգալացի ֆուտբոլիստի 20-րդ հեթ-տրիկն էր: Այդ խաղում Ռոնալդուն եւս յուրօրինակ հոբելյան նշեց: Նա ակումբային մակարդակով հատեց 300 գոլի սահմանագիծը՝ գոլերի թիվը հասցնելով 302-ի: Դրանցից 179-ը նա խփել է Մադրիդի «Ռեալի» կազմում անցկացրած 176 խաղում: «Մանչեսթր Յունայթեդում» հանդես գալիս Ռոնալդուն 118 գոլի հեղինակ էր դարձել, 5 անգամ էլ աչքի էր ընկել Լիսաբոնի «Սպորտինգում»:

# Հայաստանյան թիմերից լավագույնը «Փյունիկի» ցուցանիշն է

**Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է 2001-2012-ի արդյունքներով Եվրոպայի ուժեղագույն ակումբների դասակարգման ցուցակը: Այն գլխավորում է իսպանական «Բարսելոնը»: 2-րդ տեղում անգլիական «Մանչեսթր Յունայթեդն» է: Լավագույն եռյակը եզրափակում է Մադրիդի «Ռեալը»:**

**Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Մյունխենի «Բավարիան», Լոնդոնի «Արսենալը», իտալական «Ինտերը», անգլիական «Լիվերպուլն» ու «Չելսին», Իտալիայի բազմակի չեմպիոն «Միլանն» ու ֆրանսիական «Լիոնը»: Դոնեցկի «Շախտյորը» 18-րդ տեղում է: Դա լավագույն ցուցանիշն է ԱՊՀ երկրների ակումբների մեջ: Կիեւի «Դինամոն» այդ ցանկում 23-րդ տեղում է:**

**Եվրոպայի ուժեղագույն 600 ակումբների ցանկում Հայաստանը ներկայացնում են 6 թիմեր: Բնականաբար լավագույն ցուցանիշն ունի Հայաստանի բազմակի չեմպիոն Երեւանի «Փյունիկը», որը 657,5 միավորով հանգրվանել է 191-րդ հորիզոնականում: Հիշեցնենք, որ «Փյունիկը» 2001-2010-ին 10 տարի շարունակ հռչակվել է Հայաստանի չեմպիոն: Եվ միայն 2011-ին «Ուլիսին» հաջողվեց վերջ դնել «Փյունիկի» գերիշխանությանը Հայաստանում: «Ուլիսը» 257 միավորով 560-րդ տեղում է: Իսկ «Փյունիկից» հետո 2-րդ արդյունքն ունի «Միկան», որը 551,5 միավորով 258-րդն է: «Բանանցը» 485,5 միավորով զբաղեցնում է 310-րդ տեղը: ՀՀ առաջնության առաջատար Գյումրիի «Շիրակը» 307,5 միավորով 478-րդ տեղում է: Հայաստանի վերջին ներկայացուցիչն այդ ցանկում Երեւանի «Արարատն» է, որը 254 միավորով 567-րդ տեղում է:**

***ՍԱՄԲՈ***

# Հայ սամբիստներից երկուսը դարձան մրցանակակիր

**Ղազախստանի Ուրալսկ քաղաքում անցկացված այդ երկրի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի գավաթի խաղարկությունում Հայաստանը ներկայացրած 6 արցախցի սամբիստներից 2-ը դարձան բրոնզե մեդալակիրներ:**

**Մարտական սամբոյի մրցաշարում մինչեւ 82 կգ քաշային կարգում բրոնզե մեդալ նվաճեց Մավրիկ Նասիբյանը: Հաջորդաբար հաղթելով Ղազախստանի ներկայացուցիչներ Ռուստամբեկ Ժիրենշիեւին եւ Սամաթ Շուրինին, ռուսաստանցի Իգոր Սլերիշեւին, Նասիբյանը մտավ կիսաեզրափակիչ: Այս փուլում հայ սամբիստի մրցակիցը ղազախ Կանաս Աշիմովն էր, որի դիմադրությունը հաղթահարել չհաջողվեց: Նասիբյանն իրավունք ստացավ վիճարկելու բրոնզե մեդալը ռուսաստանցի Աբդուլա Ալիեւի հետ ու արժանացավ պարգեւի:**

**Մարզական սամբոյի մրցաշարում մինչեւ 90 կգ քաշային կարգում Դավիթ Գրիգորյանն էլ հասավ մինչեւ կիսաեզրափակիչ՝ հաջորդաբար պայքարից դուրս մղելով Ղազախստանի ներկայացուցիչներ Օրունբասար Ժումագանբետովին եւ Ալիբեկ Զեկենովին: Կիսաեզրափակիչում հայ սամբիստը պարտվեց ռուսաստանցի Վիկտոր Օսիպենկոյին, իսկ բրոնզե մեդալը վիճարկեց ղազախ Սայաթ Շամշիեւի հետ գոտեմարտում:**

# Տիգրան Սիմոնյանը նվաճեց գլխավոր մրցանակը

**Միջազգային վարպետ Տիգրան Սիմոնյանը հաջող հանդես եկավ իսպանական Պալմա դե Մայորկա քաղաքում շրջանաձեւ մրցակարգով անցկացված շախմատի մրցաշարում: Հայ շախմատիստը 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով նվաճեց գլխավոր մրցանակը:**

**Սիմոնյանն իր անհատական վարկանիշով (2409) առաջինն էր մրցաշարի 10 մասնակիցների մեջ: Նա մրցաշարն անցկացրեց առանց պարտության: Տիգրանը հաղթեց Մաքսիմիլիան Վեյմանին, Բենջամին Արվոլային, Սեւան Բուսկարային եւ Մարիո Գավիլանին, հաշտություն կնքեց Մարկ Լյելի, Յենս Հիրնեյսեի, Յորդան Իվանովի, Պեդրո Մասկարոյի եւ Բորիս Դիմիտրեւսկու հետ:**

**6-ական միավորով 2-3-րդ տեղերը բաժանեցին Պեդրո Մասկարոն եւ Սեւան Բուսկարան:**

# Մատիկոզյանը գրավեց 2-րդ տեղը

**Լոս Անջելեսում անցկացված շախմատի մրցաշարում միջազգային վարպետ Անդրանիկ Մատիկոզյանը, գրոսմայստեր Տաթեւ Աբրահամյանը, միջազգային վարպետներ, մեքսիկացի Դիոնիսիո Ալդամայը եւ ղազախ Ջանիբեկ Ամանովը 5 հնարավորից վաստակեցին 4-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով Մատիկոզյանը զբաղեցրեց 2-րդ տեղը, Աբրահամյանը՝ 4-րդ տեղը: 3,5 միավորով 5-րդ հորիզոնականում հանգրվանեց գրոսմայստեր Մելիքսեթ Խաչիյանը: Մրցաշարին ընդհանուր առմամբ մասնակցեց 28 շախմատիստ:**

# Կրկին պարտություն

**Կապանի «Գանձասարը» Թուրքիայում ստուգողական 2-րդ խաղում էլ պարտվեց: Այս անգամ մրցակիցն Օդեսայի «Չեռնոմորեցն» էր: Հանդիպման սկիզբը հաջող էր գանձասարցիների համար, որոնք 21-րդ րոպեին բացեցին հաշիվը: Դումբիայի փոխանցումից հետո Նարեկ Բեգլարյանը մենմենակ հայտնվեց դարպասապահի առջեւ, սակայն մրցակցի պաշտպանը խախտեց կանոնները: 11 մ հարվածն անվրեպ իրացրեց Բեգլարյանը, որը «Գանձասարի» կազմում բացեց գոլերի հաշիվը:**

**Ցավոք, հետագայում «Գանձասարին» ոչ միայն չհաջողվեց նոր գոլ խփել, այլեւ պահպանել հաղթական հաշիվը: 42-րդ րոպեին դե Մատոսը վերականգնեց հավասարակշռությունը, իսկ խաղավարտից 6 րոպե առաջ Բուրդուջան խփեց հաղթական գնդակը:**

**Այդ խաղում «Գանձասարի» դարպասը պաշտպանեց Գրիգոր Մելիքսեթյանը, որը փորձաշրջան է անցնում թիմում: Իսկ թիմի հիմնական դարպասապահ Արսեն Բեգլարյանը Թուրքիայից վերադարձել է Երեւան, քանի որ հրավիրվել է Հայաստանի ազգային հավաքական:**

# «Ֆրանս ֆուտբոլը» մեղադրում է Քաթարին




Ֆրանսիական հանրահայտ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի թղթակիցներին հաջողվել է անցկացրած հետաքննության արդյունքում անհերքելի փաստեր հայտնաբերել, որոնք ապացուցում են, որ Քաթարը 2022-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության կազմակերպիչ երկիր է ընտրվել ՖԻՖԱ-ի գործկոմի անդամներին կաշառելու միջոցով: Ըստ շաբաթաթերթի, ՖԻՖԱ-ի բարձրաստիճան չինովնիկներից մեկը, որի ազգանունը չի հրապարակվել, խոստովանել է, որ մի խումբ պաշտոնյաներ կաշառք են ստացել իրենց ձայնը հօգուտ Քաթարի տալու դիմաց: Մոտ օրերս «Ֆրանս ֆուտբոլը» պատրաստվում է իր մոտ ունեցած բոլոր փաստաթղթերն ուղարկել ՖԻՖԱ, որպեսզի վերջինս սկսի հետաքննությունը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

# Վիգեն Բերբերյան. «Փորձեցի ահաբեկչի միտք ներթափանցել»

*Ամերիկահայ գրող Վիգեն Բերբերյանի անգլերեն վեպերը թարգմանվել են ֆրանսերեն, իտալերեն, հոլանդերեն, եբրայերեն, սակայն հայ ընթերցողը տակավին ծանոթ չէ դրանց՝ հայերեն թարգմանված չլինելու պատճառով: Ստորեւ ներկայացնում ենք գրողի մասին եվրոպական «Կաֆեբաբել.քոմ» ամսագրում վերջերս տպագրված հոդվածի թարգմանությունը:*

Ամերիկացի գրողի առաջին վեպը՝ «Հեծանվորդը», վերջապես հրատարակվեց Ֆրանսիայում՝ 2001-ի սեպտեմբերի 11-ի դեպքերից երերացող Մ. Նահանգներում լույս տեսնելուց 11 տարի անց: Ահաբեկչությունը վեպում ստացել է գեղարվեստական մարմնավորում՝ արտահայտված հեծանվավազքի, սիրո, տնական ուտեստների պատկերներով:

«Ողջույն, սա «Կաֆեբաբե՞լն» է»: Ժպտացող, ոչ բարձրահասակ, սափրված գլխով տղամարդուն հանդիպեցինք փարիզյան մեր գրասենյակի դռան շեմքի մոտ կանգնած՝ բերետը կրծքին սեղմած: Վիգեն Բերբերյանը նման է այն երեխային, որն ուզում է նույն պահին ստանալ իրեն խոստացված քաղցրավենիքը: Խմբագրատան խառնափնթոր վիճակի մասին մեր հպանցիկ զրույցից հետո ասացի. «Ահա եւ դուք այստեղ եք»: Նա նստեց, սկսեց տարաբնույթ հարցեր տալ, մի բաժակ ջուր խնդրեց, հետո հետաքրքրվեց, թե ի՞նչ լեզվով է լինելու հարցազրույցը՝ անգլերե՞ն, թե՞ ֆրանսերեն: Նա շփվում է կատարյալ ֆրանսերենով՝ թեթեւակի առոգանությամբ, որն իր խոսքին անկեղծ գրավչություն է հաղորդում: Եվրոպական ամսագիրն այս անգամ հյուրընկալել էր Վիգեն Բերբերյանին:




## Լրագրությունից դեպի ֆինանսներ

Փարիզը Վիգենի առաջին բնակավայրը չէ: Նա ծնվել է Արեւմտյան Բեյրութում՝ Լիբանանի մայրաքաղաքի մահմեդական հատվածում: Լիբանանի հայկական համայնքը գլխավորապես Արեւելյան Բեյրութում է: «Մեր ընտանիքը միակն էր, որ ապրում էր արեւմտյան հատվածում, այլ՝ ոչ արեւելյան»: (Այս պնդումը սխալ է բացարձակապես. թեեւ ավելի քիչ քան Բեյրութի արեւելյան հատվածում, սակայն հազարավոր հայեր էին ապրում նաեւ արեւմտյան հատվածում, հատկապես 1975-ականներին: -«**Ազգ**»)

Երբ Բեյրութում 1975-ի դեկտեմբերին սկսվեց քաղաքացիական պատերազմը, նրա ընտանիքն անմիջապես տեղափոխվեց Լոս Անջելես: Այն ժամանակ Վիգենը ինը տարեկան էր: Նրանք այնտեղ շատ արագ հարմարվեցին հայկական համայնքի նիստուկացին: Տասը տարի հետո 19-ամյա Վիգենը հեռախոսով լսեց հոր մահվան բոթը՝ Լիբանանում նա սպանվել էր ահաբեկչական խմբավորումների հարձակումներից:

Կարճ ժամանակ անց Վիգենը մեկնեց Նյու Յորք, ընդունվեց Կոլումբիայի համալսարան, որտեղ լրագրության մեջ դրսեւորեց բացառիկ ընդունակություններ, որ հազվադեպ է պատահում այդ բնագավառում: Որոշ ժամանակ արտահաստիքային թղթակից աշխատեց «Լոս Անջելես թայմսում», հետո մուտք գործեց ֆինանսական աշխարհ: Մարսել տեղափոխվելուց առաջ աշխատեց Նյու Յորքի ապահովագրական ֆոնդում: Ֆրանսիայի հարավում նա գրեց իր երկրորդ վեպը՝ «Դաս կապիտալ: Վեպ սիրո եւ դրամաշուկայի», որը Մ.Նահանգներում տպագրվեց 2007-ին՝ տնտեսական ճգնաժամից առաջ, իսկ Ֆրանսիայի գրքի շուկայում հայտնվեց 2009-ին: Տնտեսական անկումից օգուտներ քաղելու նրա պատմությունը մեզ հուշում է, թե ինչու է Բերբերյանը ֆրանսիական մամուլում համարվում երազող «սարսափելի երեխա»: Հետո տեղափոխվեց Փարիզ, ուր ֆինանսական խորհրդատվության գրասենյակում 2006-2010 թթ. աշխատեց որպես հետազոտող:

Այսօր 46-ամյա Վիգենը ապրում է Երեւանում, հայ միջնադարյան արձակ է ուսումնասիրում Մատենադարանում, որը հարուստ ձեռագրեր ու վավերագրեր ունեցող ձեռագրատներից մեկն է աշխարհում: Նա ժպտում է, երբ ակնարկում եմ իր ֆինանսական գործունեության մասին. «Գիտեմ, որ հիմնական կոչումս գրող լինելն է, բայց նաեւ գիտեմ, որ ցանկություն ունեմ ուրիշ գործեր եւս անելու: Իմ բուն էությամբ ես արվեստագետ չեմ: Եթե դու ցանկանում ես լինել միակը, պետք է կյանքդ ավելի շատ վտանգների ենթարկես, ավելի, քան ես եմ ենթարկել»:

Ֆրանսիա գալով Վիգեն Բերբերյանն առ այսօր խիզախ քայլ է անում: Նրա առաջին վեպը՝ «Հեծանվորդը», որը մեկ տասնամյակ ավելի շուտ է տպագրվել Մ.Նահանգներում, բովանդակում է ահաբեկչություն գործող մարդու մտքերն ու մտորումները: Մահապարտը ցանկանում է ռումբ պայթեցնել հեծանվի միջոցով: «Այս պատմությունը սկսեցի գրել 1997-ին՝ 11/09/2001-ից շատ առաջ: Այդ դեպքից մի քանի ամիս անց, երբ գիրքը տպագրվեց, հնչեցին որոշ քննադատություններ: Լրագրողներն ինձ ասացին, որ այդ ժամանակահատվածում պետք չէր անդրադառնալ քաղաքական բռնությանը»:

Բերբերյանի գրքերը հաճախ են թարգմանվում ֆրանսերեն՝ Քրիստոֆ Կլարոնի թարգմանությամբ: Հենց նա էլ այս տարի թարգմանեց գրողի նոր վեպը՝ «Երկնքի բոլոր ադամանդները»:

Հետադարձ հայացք նետելով Բերբերյանն այժմ կարող է հպարտանալ, որ ինքն այն սակավաթիվ գրողներից է, որոնք սեպտեմբերի 11-ի դեպքերին արձագանքեցին գրական ստեղծագործությամբ: Նա չի ցանկանում, որ իր ասելիքը մթագնի զուգադիպությունների եւ հաջողությունների քայլքի մեջ: «Գրողը պետք է ժամանակից առաջ քայլի: Գրական գործը չպետք է հագեցած լինի զուտ արդի իրադարձություններով: Ես բնավ ահաբեկչության պաշտպանը չեմ: «Հեծանվորդում» գլխավոր հերոսն ակնհայտորեն մերժում է քաղաքացիների նկատմամբ քաղաքական բռնություն գործադրելը»:

## Ահաբեկիչը նույնպես սիրահարվում է

Թեպետ Լիբանանում ահաբեկչություն ծրագրող ահաբեկչի կերպարի նկարագրությունը զբաղեցնում է 285 էջ, սակայն այս հաջողված վեպում քաղաքական վեճերը հաջորդաբար ուղեկցվում են խոհանոցի եւ սեքսի հետ կապված հարցերով: «Իմ գրելաոճը խաղարկային է, եւ դա ինձ հնարավորություն է տալիս հետին պլան մղելու քաղաքականությունը», բացատրում է գրողը: Փաստորեն, նրա գլխավոր հերոսը ղեկավարվում է Ակադեմիայի կողմից, որն ահաբեկչական խմբավորման անուն է: Հեղինակը նրան պատկերում է որպես շատակեր ու հեշտասեր մարդու:



«Փորձել եմ նրան ավելի մարդկային դարձնել: Երբ լրագրողները խոսում են ահաբեկչության մասին, նրանք հատկապես սեւեռվում են բռնության վրա, բայց ահաբեկիչները նաեւ ուտում են ու սիրահարվում: Դրա համար էլ փորձեցի ներթափանցել ահաբեկչի միտք՝ ավելի լավ հասկանալու, թե ինչն է նրան դարձրել այդպիսին»: Դա լավ է նկարագրված գրքի մեկ այլ հատվածում, որը հասցեագրված է ազատ աշխարհին: «Չնայած մեր պնդակազմ արտաքինին, որն ընկուզենուց ավելի ամուր է, խորքում մենք ճիշտ ձեզ նման մարդիկ ենք»:

Ամեն դեպքում, այս վեպը ներգործություն չունի այսօրվա ահաբեկչության վրա: Դա առավելապես խորհրդածություն է կյանքի անհեթեթության եւ այնպիսի պարզ հաճույքների մասին, ինչպես սեր անելն է, ուտելը կամ հեծանիվ վարելը:

«Հեծանվորդը» բռնության ու կյանքի փոխաբերությունն է, որը նույնպես կապված է գրողի կենսափորձի հետ: «Ես սիրում եմ հեծանիվ վարել: Մի ընկեր ունեի, որի հետ հեծանվով Փարիզից գնում էինք մինչեւ Պրովանս: Երկու շաբաթ առաջ որոշել էինք վերսկսել, բայց նա ծանր վթարի ենթարկվեց ու կոմայի մեջ ընկավ: Նա սաղավարտ չէր դրել», պատմում է Վիգենը:

Նրա գիրքը սկսվում է հետեւյալ տողերով. «Դու պետք է միշտ սաղավարտ դնես, երբ հեծանիվ ես վարում: Սաղավարտը պետք է սեղմ հագած լինի: Կզակի փոկը պետք է սեղմված լինի կոկորդին: Ճարմանդը պետք է ապահով ամրացվի»:

Ահաբեկիչները կարող են օրինակ լինել նաեւ ճանապարհային անվտանգության համար:

Ըստ եվրոպական cafebabel.com ամսագրի պատրաստեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔ**

## Եվս 80 ավտոբուս Երեւանում

Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, երեկ քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ զեկուցվել է, որ առաջիկայում քաղաքային տրանսպորտի երթուղիները կհամալրվեն մասնավորի կողմից ներկրված եւս 80 ավտոբուսներով:

## Ավարտվում է 16-րդ թաղամասի բնակարանների գազիֆիկացումը

Խորհրդակցության ժամանակ մայրաքաղաքի 16-րդ թաղամասի բազմաբնակարանների գազիֆիկացման մասին զեկուցվել է, որ շենքերում ավարտին են մոտենում նախապատրաստական աշխատանքները:

## Սիրիահայերին աջակցությունը շարունակվում է

Երեւանի քաղաքապետի հանձնարարությամբ շարունակվում է սիրիահայ ընտանիքներին սոցիալական աջակցության գործընթացը: Քաղաքապետարանի հաղորդագրության մեջ նշվում է, որ անցած մեկ շաբաթվա ընթացքում օժանդակություն է ստացել սիրիահայ եւս 81 ընտանիք, 31 ընտանիքների էլ ցուցաբերվել է անվճար բուժօգնություն:

Ա. Մ.

# Համակարգված համագործակցություն՝ կրթությունը խրախուսելու ՎիվաՍել-ՄՏՍ-ի ռազմավարության համատեքստում



«Այբ» ավագ դպրոցի հետ ՎիվաՍել-ՄՏՍ-ի համագործակցությունը մեկնարկել է 2011 թվականից: Բջջային ցանցի առաջընթացի՝ առաջին սերնդից մինչեւ 4G զարգացման դինամիկայի վերաբերյալ «Այբ» ավագ դպրոցի աշակերտների պատկերացումները ձեւավորվել են իրականացված տարբեր ծրագրերի միջոցով:

Կրթական համակարգում ՏՏ դերի բարձրացմանը նպաստելու ՎիվաՍել-ՄՏՍ-ի պատրաստակամությունը դրսեւորվել է համակարգված՝ խորհրդատվության եւ մասնագիտական աջակցության տեսքով: Այդ ուղղությամբ գործադրված ջանքերը դրսեւորվել են ե՛ւ կարիերայի զարգացման ծրագրի շրջանակներում, ե՛ւ կառավարման մշակույթի համատեքստում կազմակերպված դասախոսությունների ձեւաչափով, ե՛ւ դպրոցում կրթության համաչափ համակարգ ստեղծելու պատրաստակամությամբ:

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորն իրականացրել է դպրոցի ՏՏ ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագիր: Զուգահեռաբար՝ օժանդակման մասնագետների հետ կազմակերպվել է փորձի փոխանակում եւ վերապատրաստում՝ սարքավորումների հետագա շահագործմանը աջակցելու նպատակով:

Համակարգերի նախագծման, փորձարկման եւ տեղադրման աշխատանքներն արդեն տալիս են ցանկալի արդյունք: Ցանցի ինժեներական սպասարկումը ներառվել է դպրոցի գործող համակարգում՝ ներքին ցանցի արդյունավետությունը եւ անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով: Աշակերտներին տրված է համացանցից անվճար հիմունքներով օգտվելու (20 Մեգաբիթ/վրկ արագությամբ ֆայլեր ներբեռնելու եւ վերբեռնելու) հնարավորություն: «Այբ»-ն այսօր ունի կրթության ժամանակակից գործիքները աշակերտների զարգացմանը ծառայեցնելու մեծ հնարավորություն:

Կրթության խրախուսմանն ուղղված համագործակցության շրջանակներում, կազմակերպվել է ճանաչողական-ուսուցողական հերթական հանդիպումը ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանի** հետ:

«Սերունդներին առաջարկվող նորարարությունները մարդկության զարգացմանը խթանելու նպատակ են հետապնդում: Կիրթ, բացահայտող, խելացի, վերլուծող, պատասխանատու եւ հեռատես երիտասարդությունը կարող է ոչ միայն հաղթահարել գոյություն ունեցող մարտահրավերը, այլեւ թելադրել զարգացման իր պայմանները: Դրանք, սակայն, պետք է ձեւավորվեն միմյանց հանդեպ հարգանքի, ազնիվ մրցակցության եւ անպայման արդյունքի հասնելու վճռական աշխատասիրության վրա»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 29.1.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: